# ՍՈՓԵՐՔ

# ՀԱՅԿԱԿԱՆՔ

## Է·

# ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ

Բ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ

# ՊԱՐԹԵՒԻ

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

1853

# ՅԱՂԱԳՍ
# ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
# ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ
## ԵՒ
# ՀԱՍՏԱՏԵԼՈՅ
## ԶԱԹՈՌ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ
### ՈՐՊԷՍ ԱՅԼՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՑ

ԱՐՇԱԿ արքայ Հայոց որդի Տիրանայ կուրացելոյ ըստ արժանին 'ի Պարսից արքայէ, առաքէ մեծապատուով զՆերսէս որդի Աթանագինէի որդւոյ Յուսկան որդւոյ Վրթանիսի որդւոյ սրբոյն Գրիգորի ըստ առաջնոյ կարգին 'ի Կեսարիա ձեռնադրել 'ի հայրապետութիւն Հայոց մեծաց: Զի անդ առնուին զձեռնադրութիւն վասն առաքե-

լական շնորհին. զի սուրբ առա-
քեալն Թադէոս 'ի գալն իւրում
'ի Հայս. զմի յաշակերտաց իւրոց
կացոյց անդ եպիսկոպոս, և այսր
աղագաւ անդ առնէին ձեռնադրու-
թիւն որպէս ասացաւ:

Եւ զի յետ նահատակութե̃ սըր-
բոյ Յուսկանն՝ բազում ժամանակս
անտէրունչ շրջէին ազգս Հայոց
տատանեալ 'ի զանազան վշտաց.
վասն որոյ ասացեալ լինէր 'ի սըր-
բոց ոմանց, եթէ ոչ նստցի յաթոռ
հայրապետութեանն այր յազգէ
սրբոյն Գրիգորի, ոչ լինի անդոր-
րութիւն ազգիս Հայոց: Եւ խնդիր
արարեալ գտանէին զմանուկն 'Ներ-
սէս գեղեցիկ տեսլեամբ և վայե-
լուչ հասակաւ յարքունիս Թագա-
ւորին Արշակայ, քեռորդի գոլով
նորա. զոր հրամայէր Թագաւորն
կացուցանել յաթոռ հայրապե-
տութեան սրբոյն Գրիգորի: Եւ
սուրբն 'Ներսէս ոչ առնոյր յանձն-
այլ բազում յանդիմանութեամբ
եպերէր զանմտութիւն նոցա, յուշ
առնելով զչարիսն ամենայն զոր ա-

բարեաւ էր յառաջագոյն. և բա-
ցում բանագատութեամբ և սաս-
տիւ Թագաւորին յակամայ կամս
հարկէին զնա, առաքելով որպէս
ատացու 'ի Կեսարիա Կապադով-
կացւոց մեծաւ ճոխութեամբ, զի
ընկալցի զպատիւ եպիսկոպոսու-
թեան։ Որ և զքանչելի իմն նշանք
պատմի լեալ 1. զի մինչդեռ կայր
ընդ բեմականաւն, 'ի ձեռնադրու-
թեան անդ. շնորհք Հոգւոյն սրբոյ
աղաւնակերպ 'ի վերայ գլխոյ նորա
հանգուցեալ, 'ի զարմացումն զբո-
լոր կղերիկոսս եկեղեցւոյն ածեալ
լինէր։

Եւ այսպէս արդ լուսաւոր-
գեալ նորա, գայ հաստատէ գե-
ղեցկագիր յարմարութեամբ զբոլոր
կարգս ուղղութեան, բարենախանձ
լինելով 'ի նախանձն հոգեւոր։
Եւ նախ արդ զամենայն անգթու-
թեան արմատ խլեալ՝ փոխանակ 'ի
ներքս ածէ զողորմածութիւն. չի-
նէ և աղքատանոցս առ 'ի մխիթա-
րութիւն վշտացեալ մարմնոց մարդ-
կան. ուրկաց և բորոտից, և հաշմից,

և բոլոր վտանգելոց , ուղղելով նո-ցա կարգեալ ՚ի գեղջս և ՚ի գեր-դաստանաց : զի ոչ լիցի նոցա ար-տաքս քան բնակութիւն իւրեանց ելանել : Կարգէ և վանորայս , առա-ջնոցս և հիւրանոցս և տնանկա-նոցս ՚ի քաղաքագիւղս և յաւանս , այլ և ՚ի յանապատս մենաստանս , և խրճիթս կուսակրօնից և միան-ձանց յարգարէր : Բազմօքն և ըն-մերձաւոր խնամութիւնս , և գե-ծագիր ոճիրս ՚ի վերայ մեռելոց . և այնուհետև տայր ոչ իբրև ըն-բարբարոս այլանդակս , այլ իբրև զհամեստագոյն քաղաքացիս լինել տեսանել զաշխարհս մեր :

Զայսպիսի բարեկարգութեան ձեւ և շուք տեսեալ այսպ թագա-ւորն և նախարարք Հայոց , այլ և գիտնականք վարս նորա ծննդա-կանն , ՚ի մէջ եղին ընդ այլոց եւս անանց և զնա եւս նախակարգել ՚ի պատիւ պատրիարգութեան : Վասնզի փոքր ինչ յառաջ քան զայս Կոստանդինոս որդի Մեծին Կոստանդիանոսի , յԱնտիոքայ ՚ի

կոստանդնուպոլիս զաթոռ պա_
տրիարքութեանն փոխէր վասն
Յովհաննու աւետարանչին · զի
ննջարան յԵփեսոսէ անդ տա_
րեալ · այս բաց ամին այսմ պատ_
ճառի համարձակութիւն և Երու_
սաղէմացւոց առնել՝ զփրկանցն
եւս աթոռ հաստատէին 'ի պա_
տիւ պատրիարքութեան, իբրու ունու
համարեալ ըստ որում և 'ի նմին
գղ տեսեալ եղեւ Բանին Հօր
ծնունդ և ընդ մարդկան շրջիլ և
'ի Յովհաննէ մկրտիլն և խաչիլն և
թաղիլն և յերրորդ աւուր յառ_
նելն · և վասն զի ցայն վայր չորք
միայն էին ընդ երկրաւ պատրիարգք
բաց չորից աւետարանչացն, Մատ_
թէոսին յԱնտիոք, Մարկոսին յԱ_
ղեքսանդրիա, Ղուկասու 'ի Հռոմ,
Յովհաննու յԵփեսոս · այս յայս_
մանէ իրակերութեանց վեց բո_
վանդակեալ կայցէն · Ըստ ամին սա_
կի այս և մերն Թագաւոր Արշակ
և նախարարութիւնք Հայոց հա_
մարձակութիւն առնել, կացուցին
'ի պատրիարգութիւն տանս Թոր_

գանոյ զմեծն Ներսէս . փառաւոր ի-
բաւախոհս ըստ արժանին 'ի մէջ
առնուլ զսուրբ առաքելոյն մեր
զԲարթողոմէոս և զԹադէոս, որք
ազգքանդագեանս ազին վիճակեցան
'ի տեառնէ, քարոզք և աւետարա-
նիչք, և նշխարեալ ամենքն նոցա
կայ 'ի միջի մերում . զորոց և զա-
թոռն իւր ընկալաւ կենդանի մար-
տիրոսն Գրիգորիոս ։ Եւ ապա խոր-
հուրդն զգործն կատարեալ, եւթն
միանգամայն բովանդակեալ զա-
նէր թիւ պատրիարքութեանն որ
կայ մնոյ պահեալ մինչեւ ցյաւի-
տեանս ժամանակաց ։ Նաեւ վիպէ-
վան այսորիկ և մեծն Սոկրա-
տամագիրն . և թէ սուրբ ժողովն
որ եղեւ 'ի Կոստանդինուպօլիս՝
սահմանեցին զի Երուսաղէմ, Կի-
պրոս և Հայք ինքնագլուխ ունի-
ցին զաստիճան պատրիարքութեան ։
Եւ այսպէս ապա նահապետու-
թեւն խորհրդոյ եկեղեցւոյ և 'ի մե-
րում աշխարհի լցաւ բովանդակա-
բար ինն միանգամայն դասակար-
գութեամբ պատուեալ . վասն որոյ

ոչ կարացին Յոյնք մեծաբանել 'ի վերայ մեր վասն աթոռակալութեան ։ Զգլխաւորս եպիսկոպոսացն Վրաց և Աղուանից արքեպիսկոպոսս ընդ ձեռամբ Հայոց պատրիարգին կարգեալ. իսկ 'ի Սեբաստիա, և 'ի Մելիտինէ, և 'ի Մարտիրոսաց քաղաքի և Ծոփաց աշխարհին և Մուսլ քաղաքին՝ մետրապոլիտս կացուցանէին ։ Իսկ եպիսկոպոսունս այս ըստ որոշեալ վիճակացն իւրաքանչիւրոց հաստատէին. և քահանայս և սարկաւագունս և կէս սարկաւագաց և վերծանողս և սաղմոսերգուս, այսքիկ ցանուցիր ընդ բոլոր եկեղեցիս Հայաստանեայցս վայելչապէս յարդարեալ լինէին 'ի փառս Աստուծոյ ։

Իսկ 'ի նշխարհէն Արշակայ զՎաղենտիանոս կայսր, մեծաւ ցասմամբ սաստ լցեալ Վաղենտիանէ, սպանանէ զեղբայրն Արշակայ զՏրդատ որ 'ի պատանդի առ նմա էր ։ Զոր ապա զգացեալ մեծին Ներսիսի՝ փութացեալ և առ կայսր հասեալ, և 'ի

հանդարտութիւն զնորայն շրջեալ կամս, և մեծապատիւ առ ՚ի նմանէն լեալ ըստ օրինի պատրիարգաց. և յինքն զորդի սպանելոյն Տրդատայ և զայլ ևս պատանդսն հայցեալ առեալ ՚ի կայսերէ, դառնայ ՚ի Հայս խաղաղութեամբ բազմով:

Այլ ՚ի վախճանելն Վաղենտինիանոսի Թագաւորէ անօրէնն Վաղէս եղբայր նորուն. և վաղվաղակի զմեծ զօրավարն Թէոդոս զօրու մեծաւ առաքէ հրոսակ Արշակայ արքային. որոյ և ակամայ խոնարհեալ աղաչեալ զմեծն Ներսէս չուել խնդրել խաղաղութիւն: Ոչ ապա նա անփոյթ առնէ զկորստենէ մեճակելոցն իւրոց, այլ վաղվաղակի առեալ զՊապ որդի Արշակայ անի պատանդ առ մեծ զօրավարն Թէոդոս. որում լուր լեալ դառնայ առ կայսր ընդ իւր տարեալ զպատրիարգն Ներսէս հանդերձ պատանդիւն: Իսկ անօրէնն Վաղէս ոչ իսկ արար արժանի տեսանել զսուրբ այրն Աստուծոյ, այլ ՚ի կղզի մի հե-

ռաւոր զնա հրամայեաց արտասահ-
մանել իւրոքն հանդերձ կղերիկո-
սիւք · յորում ոչ ինչ ամենեւին
գտանէր ոգեպահ պարենի աւուր
միում · այլ 'ի հրամանէ Աստուծոյ
ցնդմանէ ալեաց ծովէն զձուկնն ար-
տաքս ընկենլով 'ի կերակուր նոցա
մատակարարէր զամիս ինն : Եւ
յայլոց պատմագրաց առի և այս
ինչ, թէ անօրինին Վաղեսի որդի
մի էր անդրանիկ մերձ 'ի վախճա-
նել, վասն որոյ խնդրեալ 'ի սրբոյն
Ներսիսէ զի բժշկեսցէ զնա · և
սուրբ հայրապետն պատասխանի
արարեալ, եթէ հաւատասցէ Թա-
գաւորն 'ի սուրբ Երրորդութիւնն
ըստ Նիկիական կանոնադրութեան
սուրբ հարցն երեքհարիւր ութսնեւու-
թիցն, ես բժշկեցից զորդի նորա ·
ապա թէ ոչ՝ աղաչեցից զԱստուած
զի արագ մեռցի : Եւ ոչ առ յանձն
Թագաւորն, և մեռաւ պատանին ·
և աղաչէր Թագաւորն ոչ աղերսիւ՝
այլ իբրեւ սպառնալեօք, զի յա-
րուսցէ զորդի նորա · իսկ սուրբն
Ներսէս ասացեալ, եթէ խոստովա-

նեացի զՍրդի՝ Հօր հաւասար ըն-
նիկիական սուրբ հարցն քարոզու-
թեան՝ եւ յարուցից զորդին նոր
'ի մեռելոց ։ Իսկ խմորեալն 'ի չա-
րիս Վաղէս և ոչ վասն սիրելի որդ-
ւոյն կենդանութե առնոյր յանձ
ուղղել յաղանդոյն իւրմէ . զի ոչ
թողոյր զարիոսութիւնն , այլ կայ-
մնայր 'ի նոյն խաւարի անաստուա-
ծութեանն ։ Եւ զսուրբն Ներսէս,
որպէս ասացաւ , առաքեալ 'ի կղզի
ժառանգաւորօքն ամենայն , և զեր-
խանսն որ եկեալ էին ընդ սրբոյ
հայրապետին առաքէ բազում ըն-
ծայիւք առ Թագաւորն Արշակ-
գրելով առ նա գիր բառ այսմ օրի-
նակի , եթէ Մի արտմեսցի եղբայ-
րութիւնդ քո վասն պատրիարգի
ձերոյ , զի զաթոռակից որդին իմ
եսպան նա , որով արժանի էր այ-
մեկ ։

Ընդ որ սաստիկ ցասուցեալ
Թագաւորն Արշակ և զգանձն զե-
րեալ . և հրամայէր զօրաժողով լի-
նել գնալ 'ի վրէժխնդրութիւն սըր-
բոյ հայրապետին . զի թէպէտ և

ծանուցին իշխանքն Վաղեսի վասն որբոյն Ներսեսի եթէ ազգական է թագաւորին, և թէ մեծ թշնամութիւն լինի 'ի միջի մերում, ոչ այանձն ունկնդիր լինել: Իսկ զայնքան աւուրս զորս կացին 'ի կղզւոջն յայնմիկ, յորում աւաղ միայն էր, որ ոչ բոյս և ոչ փայտ ամենևին գտանէր, և աղօթիւք սըրբոյն ընդ ձկանն և փայտ 'ի ծովէն արտաքս անկանէր և ինքնին լուցեալ լինէր. և կերակրէին 'ի ձկանէն յայնմանէ ժառանգաւորքն 'ի յաւուր օրն մի անգամ. իսկ սուրբ հայրապետն 'ի հնգետասան օրն ապա ճաշակէր:

Բայց յաղագս անօրէնն Վաղեսի ասի բան, թէ ըստ հրամանի հզօր ձեռինն Աստուծոյ՝ սուրբ վկայն Գէորգէոս անըմբռնելի ձեռամբ զնա սատակէր, ըստ արժանի չար խորհրդոյն նմա հատուցեալ: Եւ զկնի նորա առնու զթագաւորութիւնն Թէոդոս մեծն և բարեպաշտն և աստուածասէրն. որ զամենայն նիւթս խաւարին խորհրդոց

փառաւորեալ 'ի բաց . և զանբիծ հա-
ւատս հաստատեալ հիմանցն . և
ապա որք 'ի մեռաղս 'ի վաղնջ ա-
տասահմանեալք էին՝ դարձոյց յի-
րաքանչիւր տեղիս : Ընդ որս և
զմեծն Ներսէս ածեալ առ իւր պա-
հէր , մինչեւ 'ի ձեռն նորա զամբա-
րիշտ հայհոյութիւնն Մակեդոնի 'ի
ստուգութիւն հաւատոց Ճշմարտու-
թեանն դարձուցէ . և ապա ժո-
ղով եպիսկոպոսաց միանգամայն
հարիւր և յիսնից 'ի Բիւզանդիոն
արարեալ , Նզովեալ մերժեցին 'ի
բաց զՄակեդոն և զամենայն հոգէ-
մարտս : Եւ վասն այսորիկ յառա-
ջագոյն մարգարէացեալ սուրբ
Ներսէս ասելով առ Վաղէս , թէ
Երագ բարձցէ Աստուած զամբա-
րիշտ թագաւորութիւնդ և յա-
րուսցէ թագաւոր բարի , որ փա-
ռաւորեսցէ զԱստուածն իմ : Որ և
առ 'ի մեծն Թէոդոս կատարեցա-
ւ բանն սրբոյ հայրապետին , որ-
պէս ասացն Ճշմարտապէս . զի և
բարձ Աստուած զամբարշտ խռովու-
թեան և զխաւար մթութեան յե-

կեղեցւոյ իւրում սրբոյ. և ծաղկեաց զլոյս աստուածգիտութեան և զսի-րոյ և զխաղաղութեան 'ի հաւա-տացեալս անուան իւրոյ սրբոյ. ո-րով փառաւորի մինչ ամենասուրբ Երրորդութիւնն յաւիտեան:

Բայց Շապհոյ Պարսից արքայի կալեալ կապեալ զԱրշակ արքայ Հայոց դնէ յԱնուշն կոչեցեալ բեր-դի. իսկ Արշակայ յայնմ բերդի ս-րով 'ի սիրտ խոցեալ իւրովի զինքն զրուէ 'ի կենաց: Եւ կատարեցաւ յայսմ վայրի հրաման մեծին Ներ-սիսի առ Արշակ. զի յորժամ բռ-նան զԳնէլ նենգութեամբ, որպէս ասի 'ի կատարեալ պատմութեանն, անէծ զնա սուրբն Ներսէս ասելով, եթէ Մահ քո 'ի ձեռաց քոց լիցի որպէս Սաւուղին և Հերովդէին. որպէս և եղեւն իսկ: Նա և յորժամ զԱրշակաւանն շինեաց և հրամայէր սուրբ հայրապետն քակել, և ոչ առ-յանձն թագաւորն, և աղօթիւք սրբոյն կործանեցաւ քաղաքն, և բազում ևս այլ թշնամութիւն ե-ղեւ 'ի մէջ թագաւորին և հայրա-

պետին, որպէս ասէ պատմութիւնն, վասն անլուր լինելոյ հրամանի նորա. վասն որոյ ցասուցեալ սուրբ հայրապետն ասէ. Բարձցէ Աստուած զթագաւորութիւնն յազգէդ Արշակունեաց և զքահանայութիւն յազգէ սրբոյն Գրիգորի. և ինքն 'ի բաց հրաժարեալ գնայր կայր լռելեայն, սուգ առեալ 'ի վերայ անուղղոյ վարուց նոցա, որպէս Սամուէլ 'ի վերայ Սաւուղի: Եւ բազում աղաչանօք դարձուցանէին զնա յաթոռն իւր, խոստանալով գնալ ըստ կամաց նորա:

Եւ յետ այսր ամենայնի յորժամ կատարեցան ասացեալքն 'ի սրբոյ հայրապետէն 'ի վերայ թագաւորին Արշակայ, և զայնպիսի չարաղէտս մահու նորա լուեալ մեծին Ներսիսի, ըղձակերութեամբ իմն հայցէ յինքնակալն Թէոդոսէ՝ թագաւորեցուցանել Հայոց զՊապ որդի Արշակայ. զոր և արարեալ իսկ հանդերձ սրբովն Ներսէսիւ վաղվաղակի առաքէ 'ի Հայս: Որք եկեալ գային զՄերուժանն ու-

րացող բաղում զօրք միաբե- տեալ գնայր. և ապա խմբէին 'ի պատերազմ ընդ միմեանս 'ի Զի- րաւ. և իբրև յաւէտ ինն պատե- րազմն սաստկանայր, ելանէ ապա մեծն Ներսէս 'ի լեառն Նպատ, և ըստ օրինակին Մովսէսի տարածեալ զբազուկսն յերկինս՝ աղերսալի պա- ղատանօք առ 'ի Քրիստոսէ հայցէ լինել պաշտպան քրիստոսադրոշմ բանակին. որով և պարտեցան իսկ յաստուածամարտ մարտուցեալքն: Եւ քաջն Մուշեղ որ և զզէնն իւր բերեալ առաջի սրբոյ Հայրա- պետին զի օրհնեսցէ. և զգաստա- ւակ նորին խնդրեալ կապէր 'ի նշանակ իւր, պատմէր եթէ 'ի ծածկել մթութեանն զբանակն ան- օրինաց, տեսանէի զսուրբ Հայ- րապետն լուսեղէն կերպիւ, զի գնայր առաջի և ցուցանէր նշանացի զմի մի 'ի թշնամեացն, որք ընթա- ցեալ զհետ կոտորէաք յանխնայ: Եւ այսպէս բանակն Հայոց զօրա- ցեալ, զդիակամբք թշնամեացն լցին զառատորեն ամենայն: Եւ եթէ

խոնարհեցուցանէր սուրբ հայրապետն զձեռն իւր յաղօթիցն, թագաւորն Պապ փութացուցանէր ատելով. Սակայ աղօթեա սուրբ քահանայապետ Աստուծոյ։ Զի թէպէտ զօրքն մարտնչէին՝ բայց աղօթք սրբոյն էր որ զյաղթութիւնն գործէր 'ի պատերազմին յայնմիկ։ Ուր և ձերբակալ իսկ արարեալ Սմբատայ զգլուխն Մերուժան արծրունի, և երկաթ բոլորեալ 'ի ձեռպատկի, և շանթիւք հրոյ շողացուցեալ դնէ 'ի գլուխ նորա, և այնպէս զնա սատակէ։

Բայց Պապ արքայ միշտ հրապոյրս յինքն կրեալ 'ի Ճակաճան պատերազմի գործոց, վասն այնորիկ տայր հանապազ կշտամբեալ և յանդիմանեալ լինէր 'ի սրբոյն Ներսիսէ։ Ընդ որում յաւէտ զարացեալ Պապայ, և յայտնի ինչ ոչ իշխեցեալ առնել, կոչէ զնա բազում թախանձանօք 'ի ճաշ 'ի գեղջն Խախ յԵկեղեաց գաւառի. և յիւր իսկ թագաւորական գահոյն առնէր բազմել նմա. և

սուրբն ոչ առնոյր յանձն . և առա-
ւել ևս բանադատեալ բազմեցու-
ցանէր , և ինքնին անցեալ մատուցա-
նէր արբուցանելով նմա բաժակ
մահու . զոր երբեւ առեալ ծանու-
ցեալ սրբոյն ասէ . Ո՛վ անիրաւ թա-
գաւոր , գեղով սպանանելն այնցիկ
է որք յայտնի ոչ լինիցին ձեռնհաս ,
իսկ ես յամենայն ժամ 'ի ձեռս
քոյ եմ : Նա ասէ , Թող անէր գոյս 3 :
Զոր պարտ է ասել առ այնպի-
սին , եթէ Ո՛վ անմտագոյն դու 'ի
թագաւորս , այդ ընդ որո՞յ երախ-
տեաց է զոր հատուցանես սուրբ
հովուապետիդ . ընդ որոյ զթագա-
ւորութիւնդ քեզ շնորհեաց , թէ
վասն զի 'ի ձեռն աստուածահաճոյ
աղօթից իւրոց զթշնամիսն 'ի ձէնջ
հալածականս առնէր . թէ փոխանակ
զի զանձն իւր 'ի վերայ ձեր 'ի մահ
եդեալ , թէ յաղագս աստուած-
ուսոյց վարդապետութեանն , զոր
խրատէր զմի մի իւրաքանչիւր ոք 'ի
ձէնջ , թէ վասն աստուածագութ
սիրոյն զոր ունէր առ ձեզ ամե-
նեսեան : Աւա՜ղ չար փոխարինիդ .

զմիդ տեառն հատուցանէք զոր ժողովուրդք յիմարք, և ոչ խնա-տան։ Նա է աստուածային Սո-ղոմոն։ Յանդիմանէս զանմիտն և յաւէժն առել զբեղ. և թէ Չիր-րատ ամբարիշտք անդամեն, և թէ Որպէս ջուր 'ի ծակ կարաս գո-խրատ անմտին. և Հարկիք է զբար ընդ վայր ընկենուլ զան զբան 'ի յանդէն անմտին։ Ո՜վ Թշուառա-կանք. միթէ վեհմիտցին լինիք ա-րեան նախնոյն ձերոյ խորդու, Թերևս այդ է արինախանձ զա-զանութեանց ձեր, և վասն այդորիկ յանձնիկք 'ի չարիս ձեր. այլ նորա բառ արժանեացն խրատուց եսան և առաջ են զգաստիս պատուհա-սից. զոր զի զինէք զժողովուրդ տեառն 'ի լուսոյ աստուածային ճրագացդ. և ընդէր կորուսանէք զոգիս ձեր անմատութեամբ. զանէրդ և զփարդապետաց այդոցիկ փորոց մանուկ, նմին չարապատիժ այնմիկ և վտաշուէրին, զխոխանակ փրկչին մահու մատնեալ և 'ի մահ զատա-պարտեալ, և զոր պատասխանա-

տուութիւն ունիցիք առաջի Աս-
տուծոյ։

Բայց զի ժամանակս ոչ է վար-
դապետութեան՝ դարձցուք 'ի բանն
առաջ եդաք։ Նա եկեալ մարմնա-
կի աւր հայրապետն Ներսէս 'ի
բազմականացն արքունի՝ գայր 'ի
Թիլն աւան, և մնեալ 'ի տաճարին
Աստուծոյ, և ողջունեալ զեկեղեցին
աւուրք և զեկեղեցին, և առնելով
զՄզզոյեան և զհրամարեմն և զայլոն
անձնոյն, և 'ի կերգէն համբեր-
ռեան վան աշեղ գատաստանին է,
և թէ մտրախերաւքն կարմրագոյն
դատակաւ ողջնին, և կուտակքն տախ-
տակաւայ զարգարին. և եկեալ
արտաքս և բազում մամն աղօ-
թեալ զեմ արհեւելից, և բազում
բանս մարգարէական խաւսելով,
և մերատուցեալ զպարեզան, և
իբրեւ զնկանակ մի էր կառուցեալ
կապուտակ 'ի մերայ կոծինն։ Նա
բազումք յիշխանացն որ եկեալ էին
ընդ նմա ասպաշէին զի տացէ թրաւէ
և թափեսցէ զզեղն, և ոչ տա-
յանձն, զի մի զեկեսցի 'ի հաւր-

դութենէն . այլ ասէր , թոյլ տուք զի վաղ հրաժարեցից 'ի վշտալի կենացս , և 'ի մարդկան չարութենէ ։ Եւ օրհնեալ գթաջն Մուշեղ մամիկոնեան և զայլ ազատսն, և զսեպուհսն , և պատմեալ նոցա յաճախ վասն եղանելոյ ազգին 'նեռողաց . և վասն ամենայն չարեացն զոր հասուցանեն մարդկան , և վասն չարժելոյն իբրեւ զուղխս հեղեղաց յարեւելից . յորում ժամանակի ասէ մեան մարդիկ առ ոտս լերինն որ կոչին տուրբ տեկնայքն Հախխախմեանք 5 , և 'ի կղզիս և 'ի քարանձաւս , և բնակիլ ասէ զօրացն 'նեռողաց շուրջ զովկիանոսիւ , և առաքեալ ստափկանս 'ի թագաւորեալ քաղաքն Կոստանդինուպոլիս , և երթեալ գուանէ խաչին Քրիստոսի , և եկեալ դարձեալ յայսկոյս ապանանէ զզօրապետն իւր և զառաքիչն . և զօրք քրիստոնէից միաբանեալ եկեսցեն զնեն . փախըստական առնելով զնոսս յերկս առաջս , ընդ միջերկրայս և ընդ հարաւակողմ' և ընդ հիւսիս , և

հետամուտ եղեալ հալածէին մինչեւ յարեւելս բնաջինջ առնելով զնոսա : Նա խաղաղանայ աշխարհս , և միապետի քրիստոնէութիւն . և այնչափ յաճախէ բարօրութիւն , մինչ զի աւաղէն զոչ հասեալն յայնպիսի բարութիւնսն . և լինի այս զամս վաթսուն և չորս : Նա ապա յայնժամ մարդն անօրէնութեան որդին կորստեան նեռնն . և կատարին գրեալքն ամենայն :

Զայս և եւս առաւել քան զայն խօսեցեալ սուրբ հայրապետն Ներսէս , և զգուշացուցեալ զեկեալն զկնի իւր , զխափանուան յարեւելս ասելով առնել իմաստնոց արանց : Նա զի առաքէր զնա ցաւն , հարուստ ժամս աղօթելով ճաշակեալ 'ի մարմնոյ և յարենէ տեառն , և գոհացեալ հանգեաւ 'ի Քրիստոս . կալեալ զաթոռ հայրապետութեանն զամս երեսուն և չորս :

Սա էր 'ի ժողովն Կոստանդնուպօլսի 'ի գումարումն սուրբ հարցն հարիւր և յիսնիցն վասն հոգեմարտին Մակեդոնի : Սա բազում

կարգս ուղղութեն հաստատեաց ե- կեղեցւոյ և ժողովրդոց յաշխարհին Հայոց ։ Սա վասն առաւել ջանա- փայլութեանն՝ երկրորդ լուսաւո- րիչ կոչեցաւ ըստ նմանութեան նախնոյն իւրոյ սրբոյն Գրիգորի ։ Սա յոյժ աշխարհու էր ազգաց և ա- զանց և թագաւորաց վասն առա- ւել յանդիմանութեանն և ճշմա- րիտ քարոզութեանն ։ Սա եւս բա- զում բանս խօսեցեալ առ 'ի յօ- գուտ լսողաց վասն ազգին 'Նետո- ղաց , և վասն որդւոյն կորստեան և վասն միւսանգամ գալստեանն , որ կայ 'ի կատարեալ պատմութեանն իւրում ։ Սա նախանձաւոր հարցն առաքինութեան և 'ի բազում իրս առաւելեալ , օրինակ բարեաց ա- մենեցուն լինելով ։ Սա մեծագոյն ջանիւ բառնայր զամուսնութիւն մերձաւորութեան զոր անխտրաբար ունելով ազգիս Հայոց . և սորա հրամանաւ մինչեւ յեօթներորդ ազգ սահմանեցաւ ամուսնութիւն ։

Եւ արդ եդաւ նշխարք ոսկերաց սորա 'ի թիւն առան յեկեղեցւոյն ,

ըստ օրինի քահանայապետի , և անյայտացու գերեզմանն 'ի բազում ամաց անցելոց 'ի վերայ · թերևս զգուշացեալ 'ի դաւողաց և կացեալ մնացեալ 'ի պահեստի մինչև 'ի դէպ ժամանակի յայտնելոյ 'ի հրամանէ Աստուծոյ կարգելոյ 6 :

Զկնի սորա կացուցանեն յաթոռ սորուն զՇահակ՝ 'ի զաւակէ Աղբիանոսի , այր գովելի և լի առաքինութեամբ և բարեկարգութեամբ կրօնից : Ոչ ևս ըստ սովորութեանն առաջնոյ առաքեալ զնա 'ի Կեսարիա , այլ լքեալ 'ի բաց զօրէնն առաջին , ըստ օրինի պատրիարգաց կալան կարգ , ժողովել եպիսկոպոսաց ձեռնադրել , որպէս Անտիոք և Աղէքսանդրիա և Հռոմ և Եփեսոս և Կոստանդինուպօլիս և Երուսաղէմ , զի մի յայլոց ումանց ընդ ձեռամբ անկցի , որ ինքնակալութեամբն է պատուեալ պատրիարգութիւնն :

Իսկ զՊապ արքայ Հայոց՝ կայսրն Թէոդոս ըմբռնեալ սպանանէ վասն վրէժխնդրութեան արքայն Ներսի-

ւի Ճշմարիտ քահանայապետին Աս-տուծոյ: Եւ զկնի Շահակայ զԶա-ւէն եղբայր նորուն հաստատեն յաթոռ նորա նովին առաքինա-հրաշ վարուք պայծառացեալ: Եւ ապա Ասպուրակէս եղբայր նորուն կալաւ զաթոռն ՚ի նոյին առաքի-նութիւնս յառաջադէմ գտեալ: Եւ ապա սուրբն Սահակ որդի մե-ծին Ներսիսի ընկալաւ զաթոռ հայ-րապետութեանն:

Բայց Մեսրովբ որ էր ՚ի Հացե-կաց Տարօնոյ և աշակերտեալ էր մեծին Ներսիսի, և էր քարտուղար ՚ի դրան արքունի, ընկեցեալ ՚ի բաց զպատիւ մարդկային, զհետ գնայր երկնաւորին, զկարգ միայնակեցու-թեան առեալ, հետևելով ա-ռաքինութեան վարդապետին իւրոյ և Ճշմարիտ քահանայապետին սըր-բոյն Ներսիսի 7:

Զի մեծն Ներսէս յիւրում ժա-մանակին սիւն հաստատութեան էր կաթուղիկէ եկեղեցւոյ և պարիսպ ամրութեան հաւատացեալ ժողո-վրդոց, քաջութեամբն իւրով և Ճըշ-

մարխս առաքինութեանցն ։ Ներ-
սէս քահանայապետ Աստուծոյ
բարձրելոյ և բաշխիչ մարմնոյ և ա-
րեան տեառն, որք մաքրապէս մեր-
ձենան 'ի փրկութիւն անձանց և 'ի
նորոգութիւն հոգւոց ։ Ներսէս
քարոզ բանին կենաց և դասակից
առաքելական դասուն բացայայտե-
լով զճշմարտութիւնն, և հրաւիրե-
լով զամենեսեան յորդեգրութիւն
Հօրն երկնաւորի ։ Ներսէս պսակ
եկեղեցւոյ և յարդարիչ կարգաց
ուղղափառութեան՝ վարժելով ըզ-
մանկունս նորա 'ի գիտութիւն ճըշ-
մարտութեան, և յորդորելով
յերկս առաքինութեան ։ Ներսէս
բարեխօս աշխարհի և միջնորդ հաշ-
տութեան ընդ Աստուած և ընդ
մարդիկ մեղաքաւիչ պատարագաւն
և բազկատարած աղօթիւք ։ Ներսէս
զինուոր առաքինի երկնաւոր Թա-
գաւորին Քրիստոսի, մենամար-
տեալ արիաբար ոչ ընդ մարմնոյ և
ընդ արեան, այլ ընդ իշխանու-
թիւնս և ընդ պետութիւնս և ընդ
այսս չարութեն որ են 'ի ներքոյ եր-

կնից և յաղթող լեալ ախոյեանն զօրութեամբ տեառն իւրոյ ։ Ներսէս նահատակ ճշմարտութեան, 'ի վերայ օրինաց և պատուիրանաց որդւոյն Աստուծոյ զբաժակ մահու արբեալ . վկայ տիրապէս փրկչին մերոյ Յիսուսի , յոր անձկացեալ սիրով ելանել 'ի մարմնոյս, և մտանել առ Աստուած ։ Ներսէս դասակից սերովբէից , և կաճառակից քերովբէից , և փառաբանիչ փառաց ամենասուրբ Երրորդութեանն , բարեխօսեալ միշտ վասն բանաւոր հօտի իւրում, եւս առաւել տօնողացս սիրով զօր յիշատակի իւրոյ ։

Վասն որոյ եկայք և մեք միաբան ժողովեալքս այսօր 'ի յիշատակի տօնախմբութեան մեծապայծառ և փառաշարք հովուապետին մերոյ, զհովիւն քաջ բանաւոր հօտից զտէր մեր Յիսուս Քրիստոս օրհնեսցուք. գովեսցուք , բարեբանեսցուք , բարեհամբաւեսցուք՝ և առաւել փառաւորեսցուք ընդ Հօր և ընդ Հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՆՇԽԱՐԱՑ

# ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՆՇԽԱՐԱՑ
ՍՐԲՈՑՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏ_
ՐԻԱՐԳԻ
ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ,

ՈՐ ՕՐ Ա Է ԸՍՏ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՑ
ԱՄՍՈՅՆ ՓԵՏՐՈՒԱՐԻ
ԵՒ ՀԱՅՈՑ ԱՄՍՈՅՆ ՈՐ Է ԱՐԱՑ ԻԵ·

ՅՈՐՈՒՄ ՏԱՒՆԵՆ ԵԿԵՂԵՑԻՔ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՄԵԾԱՒ ՀԱՆԴԻՍԻՒ·

ԶՈՐ ԿԱՐԳԵԱԼ ՀԱՍՏԱՏԵԱՑ ԱՐՀԻ_
ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ՏԷՐ ՍԱՐԳԻՍ,

ՏԱՒՆԵԼ ՅԱՄԵՆԱՅՆ ԱՄԻ ԶՆՈՑՆ ԱՒՐ
ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՆՇԽԱՐԱՑ ՍՐԲՈՑՆ,

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԵՐԳՈՎՔ ՇԱՐԱԿԱՆԱՑ
ԵՒ ՆԵՐԲՈՂԱԿԱՆ ՃԱՌԻՒ

ՅՈՐԴՈՐԵԱԼՍ ձայնիւ ցնծու-
թեան՝ ուետխ բերկրանաց և բա-
րեաց մատուցանեմք քեզ Հայաս-
տանեայց ուրբ եկեղեցի ․ զի յետ
թանձրամած ամպոյն ծածկու-
թեան քաղցրադոյն ծագեաց քեզ
լոյս՝ յանմուան արեւուն անստուեր
լուսոյն, և փարատեաց զախրատե-
ակ խաւար տրտմութեանն ։ Վասն
որոյ ձայնեմք ձայն ախորժելի ․ Արի
որ ննջեաց, և կանգնեաց 'ի մեռե-
լոց՝ զի լուսատու եղեւ քեզ Քրիս-
տոս ։ Բաց զաչս քո և տես զգեղեց-
կութիւն լուսոյն շուրջանակի զքեւ
ծագելոյ ․ ժողովեա զմանկունս
քո գրկօք մայրենի 'ի գութ հայ-
րական անդրէն դարձելոյ ։ Զի այս-
օր երկցս երջանիկ հայրն մեր հօ-
գեւոր, բարեզարդ հարանց նորո-
գափայլ ծաղիկն և որդին լուսոյ

սուրբն 'ներանս , հաշտ ակամբ և կամօք , և զուարթարար դիմօք քեզ երեւեցաւ :

Ուրախական նուագ ներբողեան՝ հոգւոյ քնարիս մատամբք յօրինեալ , նուիրեմք քեզ սուրբ եկեղեցի . զի յետ տրամական քոյ տառապանաց՝ ուրախութեան հնչեաց քեզ հրաւէր . ամենակարող բազուկն հզօր ձեռն եա քեզ և յարոյց , ոչ իջանել յապականութիւն : Լուաւ քեզ տէր և ողորմեցաւ . և զգայական սուգն արտամութեան զոր ունէիր զգեցեալ 'ի լուսաւորիչ հարցն բարեզարդութենէ , դարձոյց վերստին յուրախութիւն . զերծ 'ի քէն զքուրձն նախատանաց և զերկեւղն մահադառնագոյն մեղացն՝ որ անդխտութեամբ . և զգեցոյց քեզ հանդերձ փառաց և ուրախութեան պատմուճան : Զի այսօր եկն առ քեզ հայրն գորովագութ որ ծաղկերանգ պատմուճանաւ զարդարէր զքեզ . որդիական քո կոչմանդ զգօնութեան խրատն . նորագուարճ քո

անկոյ անմրութեան ցանկն . հոգե-
հարուստ քո գանձուց անվանելի
պարիսպն : Սուրբն Ներսէս սահ-
մանագիրն և կարգաւորիչ քո բա-
րեզարդութեանդ՝ ուրախացուցիչ
անուշեամբ հայեցաւ 'ի քեզ : Հըր-
ճուանք հոգեւոր , և երանաւէտ բա-
րեաց լրութիւն . հայրապետական
պատուեալ աթոռոյդ և աստուա-
ծապարգեւ շնորհիւ աթոռակա-
լիդ , անժամանակին Յիսուսի անըն-
կիզըն քահանայապետութեանն ա-
նուանակրի , առաքելական աշխ-
ճանի փառաց փոխանորդի , որ-
ժանաժառանգ սուրբ Լուսաւորչին
Գրիգորի վիճակեալ հօտին տեղա-
պահ : Զի Նորաբողբոջ շառաւի-
ղաց ծաղկեալ գալարացու գաւա-
ղանն գեղեցկութեան՝ հեղ և խո-
նարհ քահանայութիւն սրբոյն Գրի-
գորի , և տուաւ գաւազանն ուղղու-
թեան , քրիստոսանման գթով դի-
տապետութիւն՝ սուրբ հեղինակին .
և ունիս զգաւազանն յուսոյ , որով
յեցեալ մնաս 'ի հաստատութիւն ,
ակն կալեալ քո պայծառ բարձրու-

թեան, և լուսոյն փրկութեանն. զի այսօր սեփհական խնամածուն և հովիւն արթուն 'ի քեզ նայե- ցաւ, որ հովուելին զհօտ Քրիստոսի 'ի վայրի դալարուոջ. քաղցրախա- ղորդ վարդապետութեամբ գաւազանին ուղղիչն, ցասմնական ցպով սաստ- կութեան յանդիմանիչն, գեղեցիկ քահանայութեանն գաւազանա- տանն տէրունի զարդարիչն։

Սուրբն Ներսէս, սիւնն լուսոյ և խարիսխն անշարժելի հաւատոյ, ամենառատ բարեաց Ճոխութիւն, և ամենագիւտ գանձուց փարթա- մութիւն, շնորհեցաւ այսօր Հայա- ստանեայց աշխարհական աթոռոյդ. զի յաջորդակ աջոյն Յիսուսի եղեւ քեզ զօրութիւն, և զօրութեամբ բազկին բարձրեալ թագաւորական փառաց քոյ բարձրութիւն. և 'ի տեառնէ տուաւ թագաժառանգ զարմից Արծրունեաց յաղթութի։ Զի թեպէտ դասիւ վերջին ըստ ժա- մանակի, այլ զօրութեամբ և պա- տուով առաջին ըստ հաստատու- թե հաւատոյ, Արշակունեաց թա-

գին Թագրինկալ, և Բագրատունեաց փառայն փոխանորդ, ծնունդ ազնուական տոհմին Արծրունեաց, ամենակալ արքային Յիսուսի անեզական և անձնամն փառայն պատկեր և կերպարան էական Ց։

Այսօր ծագեաց նշան անծերանալի պատուոյ և մշտանորոգ ծաղկոլ պայծառութեան արքայական վեհանկեալ քո գաւազանիդ՝ Թագաւորաց ամենայարգար յօրինիչն օրինօք, և հայրն հոգխոցեաց սուրբն Ներսէս, հեղահայեաց դիմօք հայեցաւ 'ի ժամանակս քոյոյ Թագաւորութեանդ. ոչ յիշել զառաջին անհնազանդութեանն ըղպարտս, այլ ժամանեաց յօգնութիւն ակարացելոց ազգիս չարչարալս բաշխ աջոյն, պահպանիչ և նուիրական աղօթիւքն՝ բազմագիմի հիւանդութեանցն առաքինիչ. հլու և հպատակ որդւոցդ՝ օրինապահ, քահանայական հայցմամբն՝ զօրացուցիչ։

Նորոգեցաւ առ խ կցկէ՛ որք 'ի հեթանոսաց եկեղեցիք, բարձ-

րըն Եսայիաս ձեզ աւետարանէ, որք յաղթապատուակ մեղացն և 'ի ժան-գահոտ աղմամէր փարուցն 'ի վեր ամբարձայք. և յԱստուած խարիս-խեալ ամրացայք յուսով գեղեցիկ աւետարանչացն, ոռոգեալք ու-կանաւ բանին, մանաւանդ հիւսի-սային այդ Հայաստանեայց, ա-ռաքելանման հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչին որոյ բազմալոյս բա-նին ծնունդք և որդեգրեալք: Ձեզ այսօր աւետարանէ հրամա-քուրն լեզու և սրովբէատես մար-գարէն, նորոգել դարձեալ վերըս-տին. զի զոր Պաւղոսն տնկեաց, Ա-պողոս ջուր ետ և Աստուած աճե-ցոյց. դարձեալ Թառամեցոյց հողմն հիւսիսոյ: Տնկեաց զնորազուարճս զայս դրախտ 'ի կենդանի տնկոց Գրիգորիոս մշակն աշխատասէր. ջուր ետուն յորդաբուխ վտակաւ բանին որդիքն համանման, աճե-ցոյց տնկարան կերակրոյ, և կե-րակրեալն 'ի բարեաց պտղոյ՝ անեղ-ծիչն բնութեանս: Այլ դարձեալ Թառամեցոյց պատուիրանացն ան-

հնազանդութիւն. քակեցաւ ցանկն ամրութեանն, և եղեւ դրախտս այս յապականութիւն. և առ 'ի չգոյէ իշխանութեան ցանկոյն, կթեն զառ անցաւորք Ճանապարհաց, որդիքն Խամայեղի և ծնունդքն Հագարու՝ զմարմնականն պտուղ, և բանաւո-կութին զբարեաց մասունս իւրովք իշխանօք: Ահա ժամանակ գթա-լոյ և ողորմելոյ տեառն, յառնել յերկայնմտութենէ և յաթոռոյ փառաց իւրոց՝ վայրանկելոցս և գե-րելոցս 'ի ձեռնտուութիւն, ոչ եօ-թանասնամեայ ըստ Հրէիցն, այլ զամս ութհարեւր քան և չորս բառնալոյ թագաւորութեանն 'ի տա-նէն Արշակունեաց 9, և դադարումն քահանայապետութեանն 'ի զարմից սրբոյն Գրիգորի՝ յորոյ վերայ ողբս առեալ Մովսէսի, «Ողբամ զքեզ Հայաստանեայց աշխարհ, զի բար-ձաւ թագաւոր և քահանայ, խոր-հրդական և ուսուցիչ. վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ ան-կարգութի: Ողբամ զքեզ Հայաս-տանեայց սուրբ եկեղեցի, 'ի քա-

ջաց զրկեալ հովուէ և հովուակցէ. ոչ ևս տեսանեմ զքո բանաւոր հօտդ 'ի վայրի դալարուոջ և ոչ 'ի փարախ հաւաքեալ զգուշանալով 'ի գայլոց. այլ ցրուեալ անապատացար 'ի գահավիժութեանց». զոր և Դաւիթ ասէ. Քակեցեր զցանկ նորա և կթեն զնա անցաւորք ճանապարհաց:

Յայսմիկ դառնութեան աղէտս նայեցեալ ամենագութն և դարձա 'ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ. հայեցեալ յերկնից ետես և այց արար այգւոյս այսմիկ. զոր տնկեաց Աստուած Հայր աջովն իւրով Յիսուսիւ. 'ի ձեռն ժրաջան մշակին և գործաւէր վաստակաւորին բազմաչարչար նահատակին իւրոյ Գրիգորի մերոյ Լուսաւորչին. և զոր 'ի բարկութեան ժամուն և յանպտղաբերութեան պատուէր ետ ամպոց իւրոց զի մի տեղասցին 'ի նմա, այժմ ողորմութեամբ և գթութեամբ երևեցոյց մեզ 'ի յորդառատ ջրոյն կենդանի զակնակիտ վտակն քաղցրահամ, զհայրապետն

զուրբն Ներսէս, զշուարթարար ցօղն բարեպաշտութեան բուսոյն, և զանպատմելի ցնծութիւնն եկեղեցւոյ սրբոյ: Սա այսօր Հայաստանեայց եկեղեցւոյ եհաս յօգնութիւն:

Սուրբն Ներսէս, խոստացեալ այգւոյն գարմանիչ, փօսացեալ անկոցն տածօղ, թառամեալ ծաղկանց արբուցանօղ ցօղոյ: Սուրբն Ներսէս, գերեալ և նեղեալ ազգիս գերեդարձ. մոլորեալ հօտիս խնդրօղ. ծովածուփ նաւիս ղեկավար: Սուրբն Ներսէս, նսեմացեալ զարմիս լուսատու. հիւանդացեալ անդամոցս բժիշկ. անայցելու ցեղիս խնամածու: Սուրբն Ներսէս հօգեւոր շինուածոյս խարիսխ. թիւրաշարժ կառացս ուղղիչ կառավար. անպահապան քաղաքի եկեղեցւոյ զգուշացուցիչ դէտ: Սուրբն Ներսէս հովուաց տգիտաց խրատիչ. անխրատ աշակերտաց վարդապետ քաղցրուսոյց, ցրուեալ և վարատեալ անդամոց փովելի գլուխ: Սուրբն Ներսէս քահանայական

գաւազանին յոլորագալար ծաղիկ · արքայական ճոխութեն զգօնացուցիչ բանիւ · սանձ իշխանական , զօրուն մարտակից և զօրավիգն : Սուրբըն Ներսէս ամենագով նախնեացն որոց գովելի զաւակն · լուսաւորիչ հարցն հոգելից շնորհազարդ որդին · յանձրեւածին ամպոյն հայրենի՝ արբուցանող ցօղն քաղցրութեան : Սուրբն Ներսէս արեգականման մեր Լուսաւորչին ճառագայթաւէտ նշոյլքն լուսոյ · առաքինաւէր հովուին հսկողն անփհական ժառանգն · հայրենի բազմատեան անկոյն ծաղկաւէտ Ձիան օրհնութեան և քաղցրաբաժակ : Սուրբըն Ներսէս Յուսկանն որոց յարաժամ յուսոյն և յորդառատ պաղատանացն պտուղ , աղօթանուէր հայցմանն և խնդրուածոցն պարգեւ , հրեշտակատես երեւմանն աւետաւոր խոստումն : Սուրբն Ներսէս ըստ մարմնոյ ազնուականութեան 'ի քաջատոհմիկ ազգէն պալհաւունի , ըստ հոգւոյն բարեզարդութեան՝ գերաշխարհիկ և երկնա-

նման, ըստ հասակին բարեձեւու-
թեան շնորհաշուք և զարմանալի.
զորոյ այսօր անպատմելի ցնծու-
թեամբ պատմեմ՝ ձեզ զգիւտ գան-
ձին ծածկելոյ յագարակի. և դուք
վաճառելով զինչս անչաւորիս գնե-
ցէք և զայս փարթամութիւն գան-
ձու արտասուալի պաղատանօք։

Բայց քննելի է և արտասուագոչ
ձայնիւ պատմել զայս, թէ վասն էր
անյայտացեալ էր գերեզման սըր-
բոյն Ներսեսի զայսքան ժամա-
նակս ամաց. զի յայտնապէս ուսա-
նիմք ՚ի պատմութենէն, թէ ինքն
թագաւորն և իշխանքն տարեալ
թաղեցին ՚ի Թիլն աւան ՚ի մեծ ե-
կեղեցւոջն, և կացեալ սիւն լուսոյ
՚ի վերայ գերեզմանին զաւուրս քա-
ռասուն. և բազումք գտանէին ըղ-
բժշկութիւն ՚ի շնորհս գերեզմանի
նորա։ Եւ յայսմ պատճառի խմա-
նամք ՚ի պատմութենէ. քանզի հե-
րակլ արքայն Յունաց յետ ութ-
սուն ամի թուականին Հայոց եկա-
նէ ՚ի պատերազմ ընդ Խոսրով
արքային Պարսից և սպանանէ զնա.

և յետ ութ ամի այսմ լինելոյ՝ Աբդուահիմ քեռորդին Մահմետի եղանէ ութեւտասն հազարաւ 'ի Հայս․ խնդրել հարկս և կոտորել զզօրս քրիստոնէից որ 'ի Տարան գաւառի․ և անցանէր 'ի Հարք և 'ի Բասեն, 'ի Վիրք և 'ի Ջաւախս և 'ի Վանանդ․ և առեալ հարկս դառնայ 'ի Տաճկաստան։ Ի սոյն ամի քակին երեք մեծամեծ եկեղեցիքն, որ հիմնարկեալ էին 'ի սորոյն Գրիգորէ․ եկեղեցին որ Յաշտից վանսն, և որ յանուն սուրբ Կարապետին որ յԻննակնեանն, և կաթողիկէն որ 'ի Թիլն․ և 'ի փոխանակ չինուածոյ եկեղեցւոյն այլ և 'ի սրով սպառելոյ ծանօթից սպասաւորացն՝ 'ի բազում հինահարութեանց այլազգեացն, անյայտացաւ գերեզման սորոյն․ որ և այժմ շնորհօքն Աստուծոյ յայտնեցաւ 'ի ժամանակս վերջին․ յորում էին 'ի ծննդենէն Քրիստոսի ամք հազար երկերիւր եւթանասուն և հինգ․ և 'ի սորոյն Գրիգորէ իւն հարեւր վաթսուն և ութ ամ․ և 'ի մահուա-

նէ սորայն ՚Ներսեսի՝ ութ հարեւր
եւթանասուն և երկու ամ. և թուա-
կանին Հայոց որ յաւուրս Մով-
սէսի Հայոց կաթողիկոսի եղաւ
՚ի պատճառս պատճենի մերոյ տու-
մարիս եւթնհարեւր քսան և մի. ՚ի
հայրապետութեանն Հայոց տեառն
Յակովբայ հոգեշնորհ վարդապե-
տի. ՚ի թագաւորութեանն Հայոց
Լեւոնի որդւոյ Հեթմոյ և թոռին
քաջին Լեւոնի, որդւոյ Ստեփա-
նեայ, որդւոյ Լեւոնի, որդւոյ
Ռուբենի մեծի իշխանին, որ էր ՚ի
զարմն Բագրատունեաց, և յազգէ
նորին և ՚ի տանէ և ՚ի տոհմէ Արծրու-
նեաց. որ և մեր պսակաւորն Լեւոն
զերկուսն ունի թագաժառանգ ազ-
գաց զազգականութիւն. ՚ի յարք-
եպիսկոպոսութեան մայրաքաղա-
քին Եզնկայ և գաւառիս Եկեղեաց
տեառն Սարգսի. յորում տունկ
քաջազաւարծ երեւեալ ՚ի վիճակիս
յայս, որ է անգին շարշարանաց և
նահատակութեան լուսաւորչին մե-
րոյ սրբոյն Գրիգորի. պատուեալ
յԱստուծոյ մեծարեալ յազգաց և

յաղագս և 'ի Թագաւորաց մեծաց, բարեձևան չնաշխարհիկ մերում ժամանակիս և անկերպին նորոգման եկեղեցւոյ պայծառութիւն. որ և շինեաց զհրաշագեղ խորանն Աստուծոյ զգեղեցկայարմարն եկեղեցի. որ յանուն փրկչին մերոյ և անուան Սիոն-ի, բարեսէր և աստուածապարգեւ զաւակաւն Յովհաննիսիւ. վասն որոյ և այս նշան անձկալութեան յուսոյ փրկութիւն հայաստանեայց յաւուրս այսս երևեցաւ. զոր և պատմեմ ձեզ հաւատացելոց հօտից Քրիստոսի զխրախուսութիւն նշխարաց սուրբ և երջանիկ հայրապետին հայոց տեառն Ներսիսի, որ է որդի որդւոյ Սահակայ, որդւոյ Վրթանիսի, որդւոյ մեծին Գրիգորի հայոց Լուսաւորչին։

Սա է օրինակ երևմանն այսպէս. 'ի Թիլն աւան՝ յեկեղեցւոջն որ յանուն սուրբ հայրապետացն, էր անդ տարեկաց մի 'ի գործ սպասաւորութեան վանիցն, հեզ և հանդարտ վարուք Կատուականն կոչեցեալ անուն, թէ բան պատահ-

մանն և թէ ըստ յուսոյ 'ի ծնողացն ե-ղեալ, այլ Ճշմարտութեան ըստ յու-սոյ 'ի վերայ նորա կատարեցաւ. զի զայս մեծագոյն պատիւ 'ի տեսանել ընկալաւ, նմա յայտնել զՔրիստոս փառաւորեալ որդւոյն Աստուծոյ. Զոր և պատմեաց այսպէս զանձինն առաքինի զօր եկեալ յանկանան յու-նուարի 'ի ժամն և մէջ, 'ի հինգշա-բաթւոջ գիշերի. Տեսանէի առ ալն մի ծերունի հանդերձ ծիրանի զգեցեալ, 'ի կերպարանս քահա-նայական ձևոյ, նստեալ 'ի Քրոսոյ փառաւորութեան, և մատնէր 'ի գաւազան վանիցն, և ասէ ցիս. Եղ-բայր, որ է հանգուցեալ եկեղեցին որ աստ կայ. և կալեալ իմ զաւազանն Քրիստոսի իշխողի գնա և առաջնոր-դեայ մինչև 'ի հանգուցեալ եկե-ղեցին. և եկեալ առ. Աստ է գերեզման որդւոյն Աստուծոյ. և զա-ւազանաւն զոր 'ի ձեռին ունէր՝ նշանակէր զտեղին 'ի կողմն գլխոյն. և 'ի հարկանել գաւազանին՝ լոյս հրաշալի փայլատակէր 'ի տեղւոջն. և ասէ. Տեսեր զոր ցուցի՝ առաջա-

պէս է գերեզմանն սրբոյն 'Ներսէսի , յորում կան նշխարք ոսկերաց նորա . տատասկիք առաջնորդի տեղւոյդ և եկեալ հանգչիք . և չէ խորագոյն , այլ սակաւ հողով ծածկեալ : Նա այս չորս անգամ տացին ինձ գալ և ցուցանել զանցս , և ես պատճառէի զծերութիւն . և ասեն զջորիս զայս զի բարձցէ ըզծերութիւնս իմ , և ես եկեալ ցուցի : Նա իբրեւ զարթեայ 'ի քնոյ 'ի զարմացման եղեալ կայի ահիւ պակուցեալ , և պատմեցի զանցսն եղբարցն որ 'ի վանսն , և ասեն աղօթեա զի երկրորդեսցի տեսիլդ : Նա 'ի միւսում գիշերի յորում ուրբաթ լուսանայր , տեսանէի երիտասարդ մի 'ի ձեւ զինուորի , և հանդերձն 'ի գոյն ծիրանւոյ . այն ինչ բոլորեալ զծնօտիւն թխագոյն մօրուացն շուրջանակի . և ասէ ցիս . Հանեք զնշխար սրբոյն 'Ներսէսի , և ասեմ Ոչ , վասն զի չհաւատան ինձ . և նորա իբրեւ կնիք մատանւոյ ունելով 'ի ձեռին զրոշմէր 'ի վերայ տեղւոյն և ասէ . Այս է գերեզ-

մանն յորում կան նշխարք սրբոյն Ներսեսի, փութայես հանդերձ գնա. և իմ զարթուցեալ պատմեցի զանոսին։ Նա ասէն եղբարցն. Այդթեա, զի երրորդ անգամ երեւեացի քեզ առեսին, զի անհնարին է այդ թէ կարասցուք գտանել զգերեզման սրբոյն։ Նա ասա 'ի մեւս գիշերի երեւեցաւ ինձ նոյն երիտասարդ և ասէ իբրեւ սաստիւ. Ընդգէր յապաղէք և ոչ հանէք զնշխարս սրբոյն Ներսեսի։ Նա ես զարթուցեալ պատմեցի և զնոյն ասացի. և ասէն ցիս. Մի անգամ այլ երեւեացի քեզ և Ճշմարիտ է բանդ։ Ապա 'ի մեւս գիշերի յորում միաշաբաթ լուսանայր, երեւեալ նոյն երիտասարդ և ասէ. Ընդէր ոչ փութայք հանել զխառնուրեալ նշխարս սըրբոյն Ներսեսի. զի ահա այս երեք անգամ եկեալ ցուցի քեզ և հասեալ է ժամանակ յայտնելոյ սըրբոյն, որ մինչեւ ցայսօր եկաց անյայտ և կոխան ոտից, վասն այգին իւրոյ կոխան լինելոյ 'ի բազում ազգաց. այլ այժմ փութասջիք հա-

նել. զի զճնճղուկ՝ որքան 'ի ձեռին
ունիս զգուշանցիր պահել. ապա
թէ զերծեալ թռիցէ՝ դժուարին է
ըմբռնել. որ է այս ինչ առասութեան
բանին, թէ անձն սուրբ՝ որ ի-
րեւ զճնճղուկ ապրեալ եղեւ յո-
րոգայթից որսողին, հրեշտակա-
կրօն վարուք 'ի մարմնի ազատ մնա-
ցեալ 'ի հոգեկան և 'ի մարմնական
ախտից, և զայսքան ժամանակս
անյայտ լեալ 'ի մարդկանէ, այժմ
որ իւր իսկ է կամք յայտնել՝ հոգ-
տարջիք գտանել. ապա թէ ան-
փոյթ առնէք՝ դարձեալ ծածկէ
զինքն, և յայնժամ ոչ ինչ կարա-
ջիք առնել: Ես իմ յարուցեալ
պատմեցի զկերպինս զայս անսիլ, և
հաւատարիմ եղեւ ամենեցուն, և
ետուն փառս Աստուծոյ 'ի վերայ
գիւտութեան շնորհաց նորա և զօր-
ութեան: Այսպ վաղվաղակի վար-
դապետն Ներսէս առաջնորդ տեղ-
ւոյն 'ի քաղաքին հասանէր առ մե-
ծապատիւ արքեպիսկոպոսն տէր
Սարգիս, և պատմէր նմա զհանգա-
մանս անցելոյն և ուխտս տայր

բարեաց և փրկութեան լինել նշան զերեւումն սրբոյն Ներսէսի , որ յաւուրս նորա առաջնորդութեանն յայտնեցաւ . և նա գոհանայր զԱստուծոյ լսելով մեծաւ խնդութեամբ ։ Եւ ապա ասէ . Գնասջիք զգիշերս զայս եղբայրական դասիւն , հսկումն արասջիք , և 'ի վաղիւն բրեցէք զտեղին մինչև երևեսցի գերեզմանն , և ինձ ազդ արարէք , զի եկեալ հանցուք զուրախարար գանձն Հայաստանեայց . և նոքա գնացեալ այնպէս արարին ։ Եւ 'ի վաղիւն որ էր մուտ փետրուարի ամսոյ , աստուածապատիւ արքեպիսկոպոսն տէր Սարգիս և բարեսէր իշխանն պարոն Յովհաննէս որդի նորա , առին ընդ ինքեանս զպաշտօնեայս եկեղեցւոյն և 'ի պատուաւոր արանց քաղաքին և այլ բազմամբոխ ժողովուրդ քաղաքին եկին զհետ նոցա իբրև զեղջերուս ծարաւի 'ի ջուր փափագեալ . զի վկայէր 'ի միոս ամենեցուն մեծի և փոքու թէ եհաս ժամանակ փրկութեան և ազա-

տութեան հայաստանեայց ։ Նա եր-
րեւ եկին 'ի տեղին , անկեալ եր-
կրպագեցին գերեզմանին հրեշտա-
կանման մարմնոյն օթարանի , և
յարկին որոյ ծածկոյր զգանձն
լուսոյ ։ Իսկ գնշխարս որոյն հա-
նեալ էին յառաջագոյն բնակիչք
վանիցն՝ երկուցեալ 'ի բազմութե-
նէ ամբոխին գուցէ ոչ կարիցեն
հանել պատարագութեամբ ։ Նա էր
կազմեալ գերեզմանն ըստ երկայ-
նութեանն չափ երից կանգնոյ , և
լայնութեամբ իբր կանգուն մի՝ 'ի
կողմ՝ ներքին , և խորութեամբ չորս
տափձանեաք մարդաչափ մի , կազ-
մեալ կոփածոյ քարի . և յարեւ-
մտից կողմ՝ գերեզմանին էին նշխարք
որոյն 'Ներսեսի բազմեալ յաթոռ ,
և այնպէս եդեալ 'ի գերեզմանն՝
հանդէպ արեւելից , որ և նոյնպէս
կային ամենայն յօրինուածք մա-
քուր ոսկերացն յիւրում տեղւոջն ,
և գլխոյն դեր 'ի վերոյ ամենայն
անդամոցն որպէս կենդանւոյ . և
էին առաջի նորա 'ի մէջ գերեզմա-
նին այլ նշխարք , ոչ բովանդակ

մարմին՝ այլ մտօք ինչ եղեալ 'ի մեծամեծ անդամոյն և սակաւ ինչ հողով ծածկեալ էին սուրբ նշխարքն . և ապա 'ի վերայ երեքկըրկին կամարք կապեալ 'ի կրոյ և 'ի քարանց 'ի վերայ գերեզմանին։ Եւ հրամայեալ եպիսկոպոսն սպասաւորաց եկեղեցւոյն բերել զնշխարս սրբոյն մերձ 'ի գերեզմանն , զի անդ տեսցէ ինքն և բազմութիւն ժողովրդեանն ։ Եւ իբրեւ ետես զաստուածային հոգւով կենդանի նշխարս ոսկերաց սրբոյ հայրապետին մերոյ 'Ներսիսի և երկրորդ Լուսաւորչին Հայոց . յարտասուս եղեալ սկսաւ լալ և ողբական ձայնիւ իբրեւ ընդ կենդանւոյ խօսելով գութ արկանէր սրբոյն և ասէ . Ահա ժամանակ գթալոյ , սուրբդ Աստուծոյ , եթէ ողորմեսցիս քո անկեալ և տառապեալ ազգիս . 'ի բազում ալեաց ծփեալ և հողմակոծեալ կայ նաւ եկեղեցւոյ . ձեռնտու լեր և օգնեա բազմահմուտ և ամենախնամ նաւավար . մոլորեալ է հօտ Քրիստոսի , և կարօտեալ 'ի կենաց կերա-

կրօյն , գահավիժեալ և ցրուեալ.
մատնեալ 'ի ձեռս գայլոց յանխնայ
վիրաւորողաց . այս է ժամանակ
այցելութեան և թափելոյ զգառինս
քո 'ի գայլոց . Հիւանդացեալ է
մարմին եկեղեցւոյ , և ոչ գտանէ
հարազատ բժիշկ իւրոյ բեկմանն
և դեղ մահարեր ցաւուն . ոչ է
մասն եթէ պատեսցի . և ոչ 'ի միում
տեղւոջ թէ ապեգանի գտցի , այլ
բոլորովին է ախտացեալ : Հայեաց
բժիշկդ ցաւակցաբար և հայեաց 'ի
մարդասէր բժշկէն բնութեանս
անեղծողէ , զի խոնարհեցուսցէ
զունկն լսել տառապանք ձայնի
հեծութեան ներելոյս :

Զայս և որ այլն նման է մաղթէր
առաջի սուրբ նշխարացն , և առա
հրաման տայր բազմութեան ամբո-
խին , քահանայից և ժողովրդոց՝ միջ-
նորդութեամբ ապաստաւորի ուժգին
բանիւ զնախնեացն խոստովանել
զյանցանս և զանհնազանդութեան
նոցա խնդրել զթողութիւն , յա-
ղագս որոյ այսր ամենայն չարեաց ե-
կին 'ի վերայ մեր . և գտնել ողո

առաջի կենդանի նշխարացն , ոչ գնալ ընդ նոյն ճանապարհ չարեաց և ոչ ապստամբ լինել աստուածային պատուիրանացն և օրինադրացն խրատու : Վասն որոյ ասեն . Մեղաք քեզ հայր սուրբ և հոգւոց մերոց վերակացու , պատկեր Հօրն երկնաւորի և կերպարան գթութեանց նորա . մեղաք մեք և հարքն մեր , անօրինեցաք և յանցեաք : Եթէ ճաշակեալ էաք ըզպտուղ քաղցր պատուիրանացն քո՛ ոչ էաք կարօտ մնացեալ 'ի լուսաւորիչ հարցն անուշութենէ : Արդ մեք մեղաք հայր սուրբ , և դու բարկացար . դու բարկացար և մեք տառապեցաք . մեք նեղեցաք և դու գթացիր : Արդարութեամբ և յիրաւի ախտեցին մեզ ամենայն չարիք . զի կամակոր մտօք յուղիղ ճանապարհէն թիւրեցաք : Յիրաւի ծածկեաց զմեզ տրամութեանն խաւար , զի 'ի լոյս պատուիրանացն ոչ հետեւեցաք : Արդարապէս աղքատացաք , զի զցանկալին քան զոսկի և քան զամենայն ականս պատուա-

կանս զօրէնսն աստուածային յո-
գիս մեր ոչ գանձեցաք. վասն այնո-
րիկ ախրկեցին մեզ ցաւք մահաբերք,
զի հոգելցուցիչ և կենդանի բա-
նիւն Աստուծոյ ոչ կերակրեցաք:
Տիրեաց մեզ քաղց կործելի և ծա-
րաւ սպառակման, զի Աստուծոյ
բանին կերակուր 'ի քաղցր հա-
րանցդ ոչ ըմպեցաք:

Նմանեցաք մեք հնոյ ժողովր-
դեանն գերեալք 'ի Բաբելոնի, որք
և առ գետովն նստեալ լային զՍիոն
յիշելով թէ յո՞ր վայելուչ վայ-
րէ յո՞ր անկան տառապանս. և մեք
գերեալք 'ի մէջ ամենայն ազգաց,
լամք զբարձր փառաց մերոց նուա-
տանալն զրկեալք 'ի յաղթող թա-
գաւորացն, և ծառայք լեալ ազ-
գաց օտարաց. յանպատուղ ուռին
կախեալ կան կտակարանք մեր՝ զի
քաղցր պտուղ լուսաւորիչ զարմին
սրբոյն Գրիգորի՝ պակասեաց 'ի
մէնջ: Մոռացաք մեք զխրատ խա-
ղաղութեան հօրդ հոգեւորի, մո-
ռացար և զմեզ աջդ մեր յաջողակ:
Ա՜ջդ որ պարիսպ հրեղէն էր զօրացն

Հայոց · այդ՝ որ բարձրացուցանէր զդրօշ Թագաւորացն Հայաստանեայց · այդ՝ որ զօրացուցանէր զբազուկ սպարապետացն Հայոց յասպարիսի · այդ՝ որ մոլախաբար տարածմամբ պարտէր զխոյմն Թըշնամեացն · այդ շնորհաբաշխ և պարգևաշատ · այդ մնուցանող և դաստիարակ կաթնասուն մանկանց Սիոնի ։

Այդ հայր, հաշտեաց հայրենի գթոյդ միջնորդութեամբ, թող ըզպարտիս յանցաւոր որդեացս ։ Հարկանէ հայր զորդի, ցաւեցուցանէ, և ինքն ոչ միայ առանց ցաւոց, այլ քան զխրատեալն գաւազանաւ զանհնազանդ որդի՝ առաւել ևս զգայ ցաւոյն վասն ծնողական գթոյն ։ Եւ զի եկեալ կատարեցան 'ի վերայ մեր տեսիլքն 'ի քէն մարգարէական հոգւով, և կրեցաք զբերմունս դառնութեան ժամանակաց 'ի պատուհաս պատուիրանազանցութեան մերոյ, և ըստ մարգարէական բանին Անզաւակեցաք և ոչ ոք էր որ փրկէր, կարդացաք առ տէր և ոչ լուաւ

մեզ 'ի նեղութեան մերում. ոչ գտաւ մեզ անգործութիւն և ոչ թերութիւնք օգնականութեան, ոչ պահպանութիւն և ոչ ձեռնտուութիւն, ոչ պաշտպանութիւն և ոչ անընկալութիւն յուսոյ. ոչ փրկութիւն յումեքէ և ոչ ափոփանս մխիթարութեան. այլ ամենայն դուռն փակեալ քրիստոնէից. ուրախութիւն և ցնծութիւն բարձեալ 'ի միջոյ, նեղութիւն և հեծութիւն և տագնապ յամենայն տեղիս տարածեալ: Եւ վասն զի որք մնացաք, և ոչ գոյր մեզ հայր որ պաղատէր առ հայրն գթած՝ և հաշտեցուցանէր առ որդիս տարագրեալ և մերժեալ, և ոչ միջնորդ որ տարածմամբ բազկի և մատամբք մաքրեցելովք հայցէր նման Մովսեսի. այլ այժմ, հայր, հայցեա զԵրեմիայի մաղթանս որ վասն հնոյ ժողովրդեանն, մատո զմերս ձայն հառաչանաց առ բարձրեալն, որ ոչ երբէք մոռանայ. պատմեա 'ի դիմաց մերոց և ասա. Յիշեա տէր, որ ինչ անցք անցին ընդ մեզ, նայեա և տես

ընախանձնս մեր . ժառանգութիւն մեր դարձաւ յօտարութիւն և բնակութիւն մեր 'ի նժդեհութիւն . ըզջուր մեր գնոյ արբաք և զփայտ մեր առանց փոխանակի . եկն 'ի վերայ պարանոցի մեր նեղութիւն . հալածական եղաք և ոչ գոյ մեզ հանգիստ . ձեռնամուխ եղեն 'ի մեզ որդիք օտարաց : Հարքն մեր մեղան և ոչ են ուրեք 'ի միջի , և մեք հարցն մերոց ընդ մեզ եղին : Ծառայք տիրեցին մեզ . և այն որ փրկէր զմեզ 'ի ձեռաց նոցա՝ չէք ուրեք 'ի միջի :

Եւ արդ հայք , եթէ զայս աղէտ տարակուսանաց յիշեցուցես հօրն գթածի և մարդասիրի , որ ոչ երբեք մոռանայ , գիտեմք զի դարձցի 'ի բարկութենէ սրտմտութեանն՝ որ ոչ է իւր բնական , և շարժի 'ի գութ քաղցրութեան և ողորմութեան՝ որ իւր է սեփհական : Վասն որոյ հայք մաղթեա ընդ մեղուցելոցս , պաղատեա ընդ պարտաւորելոցս . հայցեա ընդ հիքացելոց թշուառականացս : Գիտէ հայրն հասարակաց լսել մաղթանաց հօր որ

վասն որդւոյ անառակ կենօք վարե-
ցելոյ · պատուէ զայնք պատուա-
կան որ վասն պարտաւոր որդւոց
երաշխաւորէ, հայր 'ի հայցուածս
հայրենի գթով թախանձել : Եւ
այսպէս որ յառաջագոյն անտու-
թեամբ ցուցաւ արկածք պատուհա-
սի բարկութեան տեառն և ընկճան
մերոյ զօրութեանն՝ ցուցցի և այժմ
յողորմութեան ժամու՝ հաշտու-
թիւն տեառն բարի կամաց և ձեռն-
տուութիւն աջոյն հզօրի յարուցա-
նել զանկեալ ազգս և մխիթարել
զբազմամեայ տխրեալքս հոգւով :

Արդ զայս և որ ինչ նման է սոցին
բանք պաղատանաց՝ մարդաբէական
հոգւով խօսեցեալք · յիշատակե-
ցան 'ի տեղւոջն · և ախտագրու-
թիւնք արտօսրագոչ հառաչանօք
յամենայն ժողովրդենէն եղեն առա-
ջի կենդանին նշխարացն : Յայնժամ
առեալ եպիսկոպոսին զսուրբ նշ-
խարսն և մատնէր յեկեղեցւոջն, ե-
դեալ 'ի սպիտակ 'ի և սուրբ կտաւս,
և առանձին դնէր յերկուս արկեղս
և կնքէր իւրով մատանեաւ · և երկու

մամն մեծ տայր 'ի պաստաւորս եկե֊
ղեցւոյն 'ի համբոյր և 'ի տես ուխ֊
տականաց ժողովրդեանն՝ որ գային
յամենայն կողմանց . և այն կայր
յեկեղեցին , կնքեալ մատանեաւ և
պահեալ զգուշութեամբ . և ինքն
եպիսկոպոսն գնայր 'ի քաղաքն , և
որ ընդ նմա բազմութիւն քաղա֊
քին , մեծավայելչութեանն Աստուա֊
ծոյ թէ զինչ արասցէ : Եւ վասն զի
հնչեաց համբաւն յաշխարհ , և
զուարճացան որ յամենայն տեղիս
ազգ Հայաստանեայց , և դիմեալ
գային բազմութիւնք հաւատացելոց
յերկրպագութիւն և 'ի տեսութիւն
սուրբ գերեզմանին . յայսմանէ
ընդոստուցեալ և զարմացեալ ազգն
Տաճկաց , և եմուտ խորհուրդ 'ի
նոսա եթէ յինչ կամի աւարտիլ
վախճան բանին . քանզի է գրեալ
առ նոսա իւրեանց գրովն հրաշալի
տեսիլ սրբոյն Ներսիսի՝ 10 որ վասն
հանդերձելոյ ժամանակացն որ ինչ
եղեալ է և որ լինելոցն . և տագնա֊
պէին խորհրդով զվերջին իրին
վախճան իւրեանց իշխանութեանն

համարելով. և բազումք 'ի նոցանէ 'ի նախանձ մատրերեաւ՝ խորհեցան ժողով լինել 'ի բնակչաց քաղաքին, գնալ գիշերի 'ի վանսն, յափշտակել զնշխարս որբոյն. Թերևս կարասցեն ծածկել զհամբաւ աշխարհալուր։ Ազդ եղեալ այս եպիսկոպոսին և գնաց քահանայական դասուք և պատուաւոր արամբք, և առեալ զուրբ նշխարսն բերեր 'ի քաղաքն մեծապէս փառօք, և բ' բերկրալից ցնծութեամբ. որում ընդ առաջ ելեալ բազմութեան քաղաքին՝ լցեալք անպատում խնդութեամբ, տարեալ եդին 'ի մեծահրաշ և 'ի գեղեցկաշէն եկեղեցին։ Իսկ պատուեալն 'ի տեառնէ արքեպիսկոպոսն տէր Սարգիս զայն և զմեւս բազուկն այլ յօրինել իմաստուն ոսկեգործաւ, և զմանր մասունս մասանցն առ միմեանս միաբանեալ յարծաթոյ և յոսկւոյ պատեալ մանրամասն յօրինուածով անգին երեւման 'ի ցոյցս անալեան արարեալ պահպանիչ աջոյն և բազկին շնորհաբաշխ։ Նոյն-

պէս և տայր յօրինել գլուխ որ-
ծաթեղէն յարմար մեծահասակ
անձինն, պահարան գլխոյն նշխա-
րաց, և 'ի բաց առնելով զցիրս երե-
սացն և զբերանոյն և յերկս տեղիս
հանդէպ Ճակատուն խաչաձեւ հա-
տուածս արարեալ յարծաթոյն,
յորում երեւէին նշխարքն փառա-
ւոր. և զայլ բոլանդակ նշխարս
սուրբ ոսկերացն՝ լուանայր զհօղն
մածեալ անապակ և անուշահամ
գինով յանուշահոտ ծաղկանց խառ-
նելոց, և օծեալ խնկահոտ իւղով
կազմեալ արուեստաւորապէս: Եւ
պահէին զգուշութեամբ մինչեւ շի-
նեսցի եկեղեցին 'ի վերայ գերեզ-
մանին, զի անդ եդեալ 'ի տեղւոջն
գերեզմանն յօրինեսցեն գեղեցկա-
զարդ կազմեալ և մեծածախ զար-
դիւք, և զանկողոպտելի գանձն զոր
շնորհեաց Աստուած գաւառին Ե-
կեղեաց՝ անդէն ծածկեալ ունելով
գերեզմանին: Իսկ զայն տապե-
լաշնորհ եդեալ արքեպիսկոպոսն
տէր Սարգիս յիւրաշէն եկեղեցին
որ 'ի քաղաքն՝ 'ի նորոգապէս շի-

ներքոյն հրաշաւորս և զարմանալի փառօք և մեծամեծաւ զարդուք երից թուով խորանաց, յանուն փրկչին մեր Յիսուսի զատուց խորանին, և միւսն կաթողիկէ և միւն յանուն սրբոյ առաքելոյն. և եդեալ անդ զաջն սրբոյն Ներսիսի 'ի զարդ և 'ի պաշտպանութիւն սրբոյ տաճարին, մնայ մշտնջենաւոր կայիւք։ Եւ ըղ-միւս բազուկ ձեռին կողման մա-տամբքն մաքուր տարեալ 'ի հաշակ-ստեան և 'ի գեղեցկաշէն սուրբ ուխտն Տիրաշինին անդէն մնայ յե-կեղեցւոյն փառաւորապէս, զոր և յառաջն իսկ շինեալ էր։ Որ և ընդ մէջ լինելով եդեմաբուխ գետոյն Եփրատայ բարեզարդ և փայլեալ միճակին և ամենադով գաւառին Եկեղեաց, զոր խմաստաբար և մեծ յաւսով արարեալ խոհեմական տէր Սարգիս, որ զերկասեան բա-զուկն և զձեռն առատաձիր շնոր-հիւ լցեալ սրբոյն Ներսեսի, զեր-կոսեան մեր լուսաւորչին, առհամանէր յերկուս կողմանս գետոյն, որպէս թէ տարածեալ ունելով զթեւսն

հաւանի գաւառին և զբաղուկն ա_
ռաջոց բարեխօս առ բարձրեալն , և
զձեռն յառնուլ աննուազ բա_
րեաց և բաշխեալ եկեղեցւոյ ման_
կանց 'ի փարթամութիւն փառաց
հայրենի գանձիւք . և տայր հաւա_
քել նիւթ շինուածոյ եկեղեցւոյն
պատրաստութիւն քարանց ։

Բայց զի աշխարհս հայաստա_
նեայց արեամբք և քրտամբք հո_
գևոր մշակացն Բարթուղիմէոսի
և Թադէոսի առաքելոց պատրաստ_
ցաւ , և երկնեալ աչիւն Աստուծոյ
և պտղաբերեալ ծնաւ զմարգն երկ_
նաւոր՝ զարժանաժառանգ զաւակն
որոց առաքելոցն , զվայելուչ ո_
ստն պարթեւեան ազգին . զԳրի_
գորիոս գերազանց գահուն յամե_
նայն ծնունդս որդւոց Ադամայ .
որոյ համանմանեալ առաքելապա_
տիւ հօրն որդիքն առաքինազարդ՝
ժառանգեցին զաշխարհս զայս փո_
խանակ հարցն որդիքն փառաւոր ,
առաքելականն ընթացեալ շաւղք
արեամբ և ճգամբք և քրտնաջան
մշակութեամբ զաշխարհս զայս Աս_

տուծոյ ծածկելով։ Յորում մանա-ւանդ քան զբնաւ աշխարհս՝ գա-ւառս այս Եկեղեցւոյ դժոխարա-պետան ենթարկութեան և շինու-թեան եկեղեցւոյ Հայաստանեայց յինքն ընկալեալ կենօք 'ի բարեաց կենաց պատճառ. և չարչարանաց յանձնառուաց երախտեաց յիշատակ և մնացուածք դեղ բժշկական մեր մնացելոց մարդկան։ Յորոց և զայժմուս զամէնն տեսանեմք յետ առաջնոյ և մեծին զերկրորդ մեր լուսաւորիչս և հայրս աստուա-ծնեան յայսմ գաւառի, 'ի մերոյ պա-տուիրանացն Աստուծոյ արբեալ զբաժակ մահու, և այն ինչ պար-գեւ եղեալ գերեզմանին հողոյ, զի հող երկրին զօրհնութեան պար-գեւս ընկալցի, պարգեւական երկ-րին ծննդեան, աշխարհ ժառանգու-թեան տուեալ սիրելւոյն Աստուծոյ Աբրահամու և զաւակի նորա, և ա-ռաջնական եղեալ մահուն. զի անդ թաղեցաւ որդւովք իւրովք նահա-պետն մեծ յայրին կրկնում՝ յագա-րակին Եփրոնի։ Որդիքն Իսրայէլի

յելն յԵգիպտոսէ զոսկերսն Յովսեփայ ընդ իւրեանս ունելով եդին ՚ի Սիկիմ ՚ի բաժնի ագարակին զոր ստացաւ Յակոբ. և մեք ունիմք զնշխարսն հոգւով կենդանի ոսկերաց որդւոյն Ներսեսի՝ որ կենաց հացին էր մեզ ցուցանատու, և կայ այժմ ՚ի բաժին ժառանգութեանն իւրոյ. յորոյ վերայ եդ զանձն իւր հովիւն քաջ և հատանէր։

Գովելի է գլուխ Հովր լերինն յորում փոխճանեցաւ Ահարոնն և անդ թաղեցաւ, և զգեցաւ զքահանայութիւն Եղիազար որդի նորա. այլ գերագանց պատուոյ արժանացաւ գաւառս այս անձնադով, զի որ առաւել փառօք պայծառացեալն էր քան զծոււմն շնորհի քահանայութեանն Ահարոնի, Քրիստոսի քահանայապետին երկնից զգեցող կարգի և ՚ի Հոգւոյն աղաւնակերպ իջմամբ վկայեալ, առա փոխճանելով մեծին և արժանապէս ժառանգին՝ զհոգևորանն զգեցեալ քահանայական զգեստ, և զնոյն պարգևս քահանայական շնորհին պայծառա‐

պէս զգեցեալ են եկեղեցիք Հայա-
ստանեայց ։ Թաղեցաւ Մանուէլ ՚ի
Գայլի մերձ ՚ի տանն Փեղովիրոյ , և
ոչ որ գիտաց զգերեզմանն նորա մին-
չեւ ցայսօր . և սորա յայտնապէս
մարմինքն թաղեալ ՚ի գերեզմանի և
ոչ որ գիտէր մինչեւ յօրս յայս , որ
նշանաւոր եղեւ ՚ի գլուխս ամաց ,
յորում յայտնեցաւ նշխարքն սուրբ
նորոգութիւն յուսոյ ակնկալու-
թեան Հայաստանեայց ։ Յեսու զօ-
րավարն Իսրայելի Թաղեցաւ ս-
ահմանօք ժառանգութեն իւրոյ ՚ի
Թամնասարայ ՚ի լերինն Եփրեմի .
իսկ մեր առաքինի զօրավարս զօրաց
և զօրավարացն Հայաստանեայց
հանգստացուցիչն և աղօթիցն զինու-
ւորականցն ՚ի պատերազմանս ,
յորում վերայ վիճակի հանգստա-
նայր ՚ի կեանս , ՚ի նոյն հանգեաւ
՚ի գերեզմանի , և ՚ի նմին յայտնե-
ցաւ ծածկեալ գանձն յաղթական ։
Ունի Արեւմտեան զՄանուէլ մեծն
անուանեալ , որ առեալ ունելով ՚ի վե-
րայ Մասուցի նշխարս . և ունի Ե-
կեղեցեաց գառուաս զաւրքն Ներսէս

զմարգարէահրաշ հոգւով տեսա-
նողն աստուածայնոյ, որ սուրբ մեծ ու-
նելով 'ի վերայ Արշակունեացն ազ-
գի ննջեաց խաղաղութեամբ. և
ամէն զարթուցեալ միխթարիչն զո-
ւարթարար արտասուութեամբ թախ-
ծեալ եկեղեցւոյ Հայաստանեաց :
Դաւիթ պատուէր տայր որդւոյ
իւրոյ Սողոմոնի զամենայն բարեաց
և արդարութեան բանս, և ինքն
ննջեաց ընդ հարս իւր և թաղեցաւ
'ի քաղաքի Դաւթի. և մեր հայր
պարծանաց և թագաւորական զար-
մի շառաւեղ՝ պատուէր տայր որդ-
ւոց իւրոց զորս ծնաւ բանին վար-
դապետութեամբ, և ինքն ննջէր
յեր խուկ չինեալն և պայծառա-
ցեալ եկեղեցի, որ է քաղաք Աս-
տուծոյ կենդանւոյ : Մաքրեալն
տուածային կայծականք մար-
գարէն Եսայի 'ի Մանասէ սղո-
ցեալ եղաւ մերձ 'ի Սեղովամ, յոր-
մէ ջուրն բժշկական ընկալեալ զօ-
րութիւն. և 'Ներսէս սուրբ Հոգ-
ւոյն Աստուծոյ հրով մաքրեալն,
'ի նորին բարուց զուգակից 'ի Թա-

գաւորէն՝ վասն յանդիմանութեան զբաժակ մահու արբեալ, եդաւ մարմինն հողանիւթ 'ի հող երկրի, յորմէ զօրացեալ բնութիւն հողոյն բժշկական ներգործութեամբ ազդէր առ յուսալ և հաւատալ զխմեալսն 'ի տեղի հանգըստարանին. վասն զի մարմինք հոգւով մաքրեցելոցն և անդէն 'ի հող դարձելոց մահուամբ՝ բարեպաշտութեան երկնային և պատիւ գերաշխարհիկ ընձեռեն երկրի, և վասն երկնաւէտ բարեաց աղբիւրացեալ ունին յինքեանս:

Բայց զի՞նչ է ինձ զաստուածամերձիցն տրանց Աստուծոյ կենդանեաց և նշխարք ոսկերաց զօրդ և զգուառ հռչակագործաց՝ առ միոյ այս ժողովել բանիւ, որ յայտնութեամբն եղեւ բերկրանաց պտուղ մերոյ աշխարհիս. այլ այսքան յիշատակեալք իբր հիւրամեծարք սեղանոյ սուրբքն սրբոյս և երջանիկքն հոգւով երկսյ երանեան հօրս և Հոգւոյն սրբոյ օթեվանի. հնոյն և նորոյ ժամանակի առաջնոյ

և վերջին սրբոյն գաւառ ազգակից առաքինութեան և քաղաքակից բարեաց և երանութեանն ։ Զի և այս աշխարհ հանգոյն համայնից բարեբաստիկ գոլութեամբ հռչակելոյ` համապատիւ է և յականաւոր առաքելոց վեհից վիճակելով, և տեղի հանգստեան նոցա արժանացելով, և առաքելանման հարց և լուսաւորիչ սրբոց կարգօք և կրօնիւք պայծառացելով, և զսերմն բանի ուղղափառ վարդապետութեան նոցա 'ի համբարս հոգւոց զգուշութեամբ կնքելով և պահելով, և անպակաս զնոյն ուղիղ հաւատոյ խոստովանութիւն մանկունք ծընելոց ընդ հօրն պատրաստ են հատուցանել ։

Եւ արդ մեք որդիքս Թշուառացեալ և բարեզարդ խրատու հօրդ կարօտեալ, նեղեալ 'ի յոքնատանջ կրից մեր մեղաց և յանխնամ խրատիչ նեղչաց, անկանիմք առաջի քո կենդանի նշխարաց, և յօր յիշատակի քո մեծահանդէս տօնի` 'ի յուշ արկանեմք զանթուելի բա-

բեալ քոյ բաղդատութեան. ոչ
ընդ միում ամեք 'ի սորոցն զուգա-
բանեալ, այլ զհամադումար գա-
վեստ ազնուականացն դասու յան-
ձին առացեալ ։ Քաջահանայապե-
տարի միայն և միայն Ճշմարտի պա-
տարագի արժանապէս մատուցող
կենարարին մարմնոյ և արեան, որ
առաւել խոսի քան զՀարեալին. այլ
և իբրև զարդարին առաջին ան-
մեղ նենգեալ և զանձն Աստուծոյ
պատարագեալ ։ Մեծի յուսոյն խա-
բախտ հաստատեալ սինդ Հայա-
ստանեայց, որովք Նովին հանդի-
սանայր ։ Պատուոյդ հերոյց և սա-
րանէր, որովք Աբրահամ հայրն
հաւատոց պայծառանայր. զի քո է
բարեկարգութեան այս առհմա-
նեալ յաշխարհս և յազգս Հայա-
ստանեայց ։ Զաւակ խնդութեան
յուսոյ բերկրանաց և խոստմա-
նեանց որպէս դիտահակ, զի
զաւարթունն երկնաւոր կանխա-
սեանց գրգռումն շնորհացն որ
'ի քեն մեզ աղբիւրաբար ։ Աստ
նորդ բարեաց մեր Ճանապարհին,

որպէս Մովսէս իսրայելեան բանակին . այլ և հրաշագործութեամբ ոչ նուազ քան զնորայն ժամանակի . նա յանապատին , իսկ դու յանդնդակ կղզին . նա լորամարգի յօդոյ , իսկ դու չեղջս ձկանց 'ի ծովէ առանց գործիական արուեստի , և ջուր յապառաժուտ վայրէ քաղցրահամ , և հուր ինքնածին 'ի պէտս ժամու : Խնկարկու հաշտարար ըստ Ահարոնի , և այնքան վեհագոյնի՝ որքան զօրինակն ճշմարտութիւն . արեամբ կենարար գառինն երկնաւոր , և խնկով աղօթիցդ ծերունական , մաքուր ոսկեղէն սրտից բուրվառաւ , և հրով ջերմութեան Հոգւոյն Աստուծոյ՝ բերող ազատութիւն մեզ յանցաւորաց : Լցեալ մարգարէական հոգւով իբրեւ զՆաթան և զԳադ մարգարէիցն որոց : Նախանձաւոր և վրէժխնդիր աստուածային օրինացն իբր Հեղիաս , որ և ընդ բանին խօսել տրամադրէս լինէր գործոյն և իւրն կատարելութիւն : Կրկին հոգւոյ շնորհօք զարդարեալ որպէս Եղի-

սէրս զվարդապետին , և զու զնախ-
նոյն քո և առաջին մեր Լուսաւոր-
չին : Քարոզ Ճշմարիտ բարձրագոյ-
նային պատմելով Նորոյս Յակով-
բայ տան Հայաստանեայց զմեզս և
զանօրէնութիւն և խրատեալ յու-
սումն սուրբ աւետեաց աւետարա-
նին : Վկայ ընդ վկայից Ճշմարտու-
թեան 'ի վերայ պատուիրանաց
Աստուծոյ և վերակացութեամբն
յոր հաւատացար ուսուցանել զՃա-
նապարհս օրինացն' 'ի բարեաց ա-
ռեցող բարուց կենաց աւետարա-
նիչք մահացու գեղջք մեռանելիր :

Այլ կրեցեալքն ամենայն վտան-
գաւորք և չարչարականք աշխատա-
սիրի վաստակաւորիդ 'ի յերկինս
բազմապատուզք անձեցին . իսկ մեք
ըստ արժանեացն որ գործեցաք' ան-
բերելի ցաւովք տանջեցաք . նա և
արդէն իսկ չեւ ես են լցեալ ըստ
յոլովութեան յանցանացն և ար-
կածք մեր պատուհասից . այլ նե-
ղիմք հիւանդարար ցաւովք և բժիշկ
բարեկամի ոչ հանդիպիմք : Ընկեալ
կամք 'ի յանարգութիւն և կարե-

կրցաք ձեռնտու յարուցանող ոչ գտանեմք. վարակեալ եմք մեղաց տրամք, և որ լուծանէ յայնմանէ աղօթիցն հայցմամբ՝ չէք ուրեք 'ի միջի. Թանձրացեալ է անդիտութեն մեզ խաւարի, և որ ցրուէ զայն լուսափայլ բանին վարդապետութի՝ ոչ դիւրաւ գտանի: Որբացեալ եմք 'ի բարեզարդ հօրէ, և չէք մեր հայր որ գանձէ որդւոցս փարթամութի. անկատար եմք 'ի սնունդ հոգևոր, և որ արկանէ 'ի վերայ զգութ գորովագայոց 'ի Քրիստոս՝ ոչ ոք դաստիարակ: Ցանկութեամբ մարմնոյ ընդ երկիր քարշիմք տողաբար իբրև զերկրածինս 'ի զեռնոց, և որ զերկնաւոր բարեացն ախտիս մեզ հաւատարիմ առնէ զանձն տալով օրինակ՝ առ ոչ ոք վստահութիւն: Ցամենայն կողմանց յաճախեն մարտ պատերազմի, և զօրապետ առաջինի յորդորող զՔրիստոսի զինուորսն՝ ոչ գոյ յառաջադէմ մարտին: Ննջեմք 'ի քուն Թանձրութեան զբաղեալ ունայնութեամբ կենացս երկրաւոր, և հաւատարիմ

քարոզ քաղցր խնծանաւ ձայնի
զարթուցիչ ոչ գոչէ 'ի միջի մերում.
Դատանամք տատնելքս կենդանիս, և
անապառող բարեացն ընծայեմք. և ոչ զ
անկարգաւորն խառնաշփոթն խանգարեր.
զի պատրաստելովն 'ի պատճառանելոյ
հրոյն թափեսցէ: Արտաքնացեալ ան-
մաքուր խորհրդանանն բոլորք բարե-
պաշտութեան ողջոյն մեր անդա-
տանի, և որ պահէն յայտնանէ
զուարթուն ակամբ անձնուածսն ոչ
է ամենայն փութալ: Գողոցեալ մի-
նեն զանձքս մեծացեն, ժողովուրդ
Յիսուսի արեամբն գնեալք. և զան-
ձանոր հաստատելով ոչ եղերէք հան-
գեալ: Քաղցր և ծարաւի եմք են-
նայն բանին և լսողել մեզ զայն ող
որ անզանազանեն. մերքեր և անթա-
եմք յառաքինութեան զգեստուց-
և որ արկանէ զայն մեզ պատմուճան
և երկնէ մինչ վերջացին ծնցի և ըն-
գեցանքին ամբարշտութեան զգուշացու-
ցէ, ոչ որ ցաւակցաբար արտա-
սուորէ:

Ահա գու, հայր. հայեցեալ 'ի մեղ
'ի վերուստ ձեռնտուութեամբ հայ-

բական գծոյդ, զի կարող ես եթէ կամեսցիս, և այնքան առաւել որքան ազատ 'ի մարմնոյ կապակցութենէ, և այնչափ առատ որչափ մերձ ես համարձակութեամբ յաղբերդ բարեաց ։ Ընդ քեզ առեալ զդասս երկնայնոցն յորում զաւեցար, զդասս սրբոցն յորում ամբարձար, զերամս արդարոցն յորս խառնեցար, և ամենեքումբք զամենեցունց տէրն աղաչեսցես, զի տացէ վիրաւորելոցս ցաւոցս ապաքինութիւն, գերելոցս գայթակղութեամբ՝ ձեռնտուութիւն յուսոյ. կապելոցս ընդ մեղօք ծառայութիւն՝ ազատութեան արձակումն. խաւարելոցս անգիտութեամբ լուսոյ ապաւինութիւն. որբացելոցս որդւոց մեղուցեալ՝ զհայրական գըթոյն բարութիւն. 'ի պատերազմունս թշնամեաց՝ զամենայօր աջոյն օգնութիւն. ցրուեալ և մոլորեալ ոչխարացս՝ աստուածայինն և քաղցր ձայնիւ վերստին դարձեալ ժողովումն. 'ի ջուր հանգստեանն և յարօտս կենաց անմաշելի գողոց և

գայլոց · զքո բարեզարդութեամբ կարգաւորեալս եկեղեցի . և զբանն վարդապետութեամբ լուսաւորելոյ՝ քոյին հայցմամբ աղօթիցդ խնդրեա անսասան մնալ յաւիտեան ։ Աղաչեմ զբարեխօսութիւն գլխոյ եկեղեցւոյ և զակն ամենայնի՝ որ ոչ երբէք ՚ննջէ , զի ողորմութեամբ հայեսցի ՚ի տառապեալս և ՚ի կործանումն եկեղեցւոյ , զոր ամբարշտութիւն չարեացն մեր և անհնազանդութիւն հրամանին Հայրենի՝ խախտեցին զհիմունս , և ցրուեցին զժողովուրդ գնեալ պատուական արեամբ որդւոյն Աստուծոյ · քո տարածմամբ բազկացդ մաղթեա՝ զի ձեռն հզօր և աջն կարող , աշխարհի շինօղն և խնամօք պահօղն՝ դարձեալ ժողովեսցէ ՚ի ցրմանէն և անսասանելի ամրութեամբ պահեսցէ ՚ի փորձանաց · և արժանի արասցէ ուղիղ հաւատոյն փառաւորութեամբ փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիւնն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Երկրորդ պատմական Ճառքդ որ յ՚Եւ Սոփերս, գաղափարեցան ՚ի ձեռանէն գրչիս ՚ի ՉՂԲ թուի։

1. Առաջի ակամբ խոհրդոյ պատմութեանս գաղափարել ՚ի Յովհաննէ կաթողիկոսէ։

2. Այսինքն թագաւորելոյ ոսկէս գայլ պատարագման, անկանել յայլոց արքեպիսկոպոսաց եւեթ և ՚ի պատրիարգաց։

3. Յայս վայր ՚ի Յովհ. կաթողիկոսէ։

4. Տես յ՚Ա (Զ.) հատորն և ՚ի 130 ծանօթութիւնն. և վասն ամուսնանցն ՚ի ծան. 154։

5. Այսինքն է լեռան Վարագայ, որպէս և առի խոյ ՚ի բանս ամուսնանն յիշելոյ։

6. Առաջի ուրեմն յայտ է զի յառաջ քան զգիւտ նշխարաց սրբոյն, զոր պատմէ Ճառս յետագայ, գրեալ է համառօտութիւնս այս վարուցն։

7. Այս եւս բանք ՚ի Յովհ. կաթողիկոսէ, որ առեալ է ՚ի Մով. Խորենացւոյ։

8. Թուին առ Լեւոն թագաւոր Հայոց որդի Հեթմայ Ա., կարգեալ բանքս, զի և երկուցն առհմայ՝ Բագրատունեաց և Արծրունեաց՝ արեամբ խառնեալ վիպէ զնոսա՝ գինի։ Իսկ բանին սպասաւոր՝ թուի Յովհաննէս վարդապետ Երզնկացի. զորմէ և զիրերն Սարգսէ արքեպիսկոպոսէ և զզուշոյ նորա՝ գրեցին բանասէրք զուանդեալն յ՚Թ. հատ. Բազմավէպ. 214։

9. Բանիցս գինի ՚ի 1275 թուին Քրիստոսի առէ լեալ գիւտ նշխարացն, սոսա բարձեալ անտի 824 ամ՝ հանգիստ բարձումն թագաւորութեանն Արծրունեաց ՚ի 451 ամ նորին թուականութեան. և

այս կայր զօրն խնամատարութեամբ, զանգի Թէպէտ Թագաւորութեանն այնորիկ յաջողութիւն 'ի զօրս և յաւելս եւս ամենայն ժամու գոհացեալ էր. այլ '' Ի նախագահութիւն Հայոց անկանիլ Թագաւորու- ,, Թիւնն ,, որպէս ասէ Եղիշէ. և պատմիչն նախ- առնութեամբ Մեծին Կարմիր Վարդանայ յամի 451, փախուստ եղեւ հաւատութեանն Եղբայրութեան,

10. Վասն ասպետանն առա 'ի Տաճ. 4. Իսկ զ յետնոյ էր պատմութիւն ասպետանն և յայսոյ ընդու, յանձին այլոսամ հաւատոյ. զայդ յետ գեղական պատմութեան յարաքայի ընդու կարգել էր ասպաց զգայուն, կամ յայլ թէ պէտս.